



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



39

-44

28 JUN 2005

78  
19 NOV 2010

ԱՂԱՍԻ

# ԶԵՅՅՈՒՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ԴԻԷՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Հենք ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԵՕԹԸ ՊԱՏԿԵՐ

Գրառած 1900 իւն

ԳԱՅԻՐԵ ՏՄ. ԱԲԻՆՔՈ

Կ Հ Զ Օ Ն Ե Մ Ա Ց Ս Գ Ի Ր Ք Ը

Տաշօղուզզի տմնեան հերոս Ճեղատի (Կարապետ Ղըր—  
Փենիւսեան), Պապիկ բաշայի որդի՝ իշխանազն Ավետիք  
Ենիտիւնեայի, Մավենիքի զիւղապետ անդիծ ու անձնուեր  
հայրենասէր Համար Մարտիրոս Շատալախեանի, Արեգնի  
զիւղապետ Խաչեր քենեա Կարապետեանի, որդին ան-  
վեներն Ա ասուրի, Միհայելենիքի զիւղապետ Միայէլ  
քենեայի, Զեյրունիքի՝ Շամբէյիշեան մղսի Փանոսի,  
Ավագ աղա Զաքրեանի, ուսուցիչ Ավետիք եֆենտի  
Կիսիւսեանի, Արքին աղա Զօրաբեանի, Ստեփան եֆենտի  
Քուսպուսեան Հայ աղա Մերկենեանի, Զգօնեան  
Խաչերի, Կայժակնասիրտ Թօփուզզի (Գեորգ Մարաշեան),  
Ավագ Կալի զիւղապետ Պողոս աղա Տէր-Յովակինեանի,  
Ֆունչսցի Համար Պետրոս Զինիկէօղեանի, Հաճնցիք՝ անձ-  
նուեր գործիչ դեղագործ Յովեան Ճիկերեանի, քաջազն Եր-  
րիմ Թուր-Մարգուեանի, Մարաշիք՝ մեծահայուսու ու  
անձնուեր Եղրառ եֆենտի Էմրալեանի, ուսուցչապետ Պա-  
րոն Սամուշենեանի, Այնրապցիք՝ Ներսէս Գաղանձեանի,  
Յակոբան Ավագեանի և Զեյրունիքի պաշտպանութեան,  
125 հերոս նահատակներու անոնաց յիշատակին, և անձ-  
նուեր հայրենասէր Պեյլանցի Պարոն Թորոս Մահակեանի  
անունին:

06.02.2013

18819

+ 4 +

ԶՕԴ

— = —

Չեղի կը ձօնեմ, յիշատակին ձեր,  
Ազգին նահատակ ու հերսո անձեր,  
Գիրքը ձեր դործոց, այս գիրքս չնչին,  
Որ ձեր անուններ մեր մէջ չի չնչուին։  
  
 Քրիստոնեայ աշխարհն մեղ, ափսո՞ս, խաբեր,  
Չեղ համար մնաց հարուստն անտարբեր։  
Աղատութիւնը պիտ' առներ ծնունդ  
Չեր բազկէն, անոնք թէ տային սնունդ։  
Ու սուրբ դործին մէջ՝ հերսոններ աժան  
Փրկութեան եղան դահիճներ դաման,  
Բանդի աղքատի խեղճուկ ափերէն  
Չեղ համար ժողված սոկին լափեր են։  
Ու ես՝ Նեղոսի տիսուր ափերէն։  
Կը ձօնեմ լոկ զիրքս որ միշտ ըլլայ թո՛ղ  
Չեր անուան վրայ մահ որձան, կոթող։  
Քիչ մը կըսփոփիմ տալով այս նուէր,  
Ես որ կարդացի ձեղ մահուան հրաւէր։  
Դուք որ պատկեցաք անթաղ ու անփայլ,  
Մեծ էիք հոգւով մաքուր, լուսափայլ։  
• • • • •

Ես ձե՛ղ կը ձօնեմ, աննման բաջեր,  
Քաջեր եղական, վեհոգի քաջե՛ր . . . .  
Հազար էիք երբ մէկիդ դէմ հարիւր,  
Թշնամին բիւր կանոնածներէն իւր։



55685-66

+ 5 +

Սակայն իբր առիւծ, բոլորդ աներկիւդ,  
Մանչեցիք ու չը թողիք ձեր գիւղ։  
Ու ինձ ըսիք.  
— «Կը կոտրտենք մենք անոնց կողերը,  
Ի՞նչ կրնան ընել մեղի զողերը . . . .  
«Աալման» կապած ձեր ուսերուն ետե,  
Հրացանն առիք շուտ մ' այնուհետեւ,  
Առիւծ զրիք ձեր փորին չիշ մ' օղի։  
Դերկար կոռւեցաք գուք առանց աղիւ  
Հացի տեղ կերաք Պէրփաէն խոտեր,  
Բայց Թուրբը ձեզ բանտ չի կրցաւ խոթեր։  
Զիւնին խաւերը ձեզ ըրիք վերմակ,  
Զի գրազեցիք օր մը զրւչը ճերմակ։  
Դուք էիք երկրին զաւակ հարազտաւ,  
Կոռւեցաք մինչ վերջ ըլլալու աղատ,  
Տանեակներդ ընկաք, ափսո՞ս, անօթի,  
Կուրծ տալով սակայն միտ թնդանօթի . . . .  
Կոխւը ձեղի հարսնիք մը կուզար,  
Չեր սիրականն էր միշտ դնդակ ու բար։  
Ու ընկաք մահով անձահ քաջերուն,  
Փարած հաւատքի ձեր Սուրբ Խաչերուն։  
Ընկաք բայց Թուրբը չառաւ ձեր Զէյթուն,  
Սոսկաց խոկ առնուլ շուկայէն դէյ թուն (1)։

(1). Պատերազմին ատեն՝ Մարաշի, Այնթապի, Հալէպի  
և Իզմիրի Թուրբերը շուկայէն ձիթապտուղ առած ա-  
տեննին, զէ թուն բառը չարտասանելու համար, չու-  
նաալէ թուն վէր (սա անիծեալէն տուր) կըսէին ։

Մայրերնիդ չեղան ձեզի համար լաց,  
Քանի թշնամին մեր լեռներ վլաց,  
Կարմիր արխնով իր երկրիւր քաջին,  
Ու այնտեղ այսօր ձեր էզիք կամին . . .  
Հանգիստ բնացէք, բաջաղուն եղբա՛րք,  
Ազգին ու երկրին գուք պարծանքն ու փառք:  
Թէ մեր երազէն չատ բան չի մնաց,  
Աւեր աշխարհէն Զէյթուն ողջ մնաց:  
Եթէ ամեն տեղ ձեղ պէս ըլլային,  
Հայ մայրերն այսօր չը պիտի լային:  
. . . . .

Ու թող ձեր անուն Զէյթունին հանգոյն:  
Այս զբքոյկիս մէջ մնայ միշտ կանգուն:  
Զի կոտրեցիք թուրբին կողերը,  
Զի մտան ձեր տուն անոր գողերը:

ԱՆԱՍԻ

10 Դեկտեմբեր, 1901

Գահիրէ

**Ա Ն Զ Ե Բ**

Նազար իշխանը:

Յարօ, Զէյթունի թրբասէր իշխաններէն մին:  
Ավետիք, Սրբուկի զաւակն և Նազար իշխանի եղբօրորդին:  
Օվաննես վարդապետ, Թօրալ մականուանեալ, Վանահայր  
Զէյթունի:

Տէր Սարգիս, Աւազերէց ֆանուսի մերձակայ Մուջիկ-Տէրէյի  
Ճշլատ, Զէյթունցի աւազակապետ:  
Մագհար Բալա, հրամանատար Օսմանեան բանակին:  
Երանիկ, Յարօյի եղբօր տղջիկը և նշանածն Աւետիքի:  
Կատար, Զէյթունցի աւազակուհի:  
Սրբուկ, Ավետիքին մայրը:

Հայեր, հայուհիներ, բահանաներ, ելն.

Թուրք զինուորներ, սպաներ, մօլաներ ելն:

Դեպքերը տեղի կունենան կի լիկիոյ մէջ 1895 իւ

Առաջին Արարուած. — Հարոնախօսութիւնը. — Ապրա-  
տամբութիւնը:

Երկրորդ Արարուած. — 

Ա.	Պատկեր.	—	Դաւագիրները.
Բ.	Պատկեր.	—	Մեկնումը.

Երրորդ Արարուած. — Կատորածները:

Չորրորդ Արարուած. — 

Ա.	Պատկեր.	—	Մատնութիւնը.
Բ.	Պատկեր.	—	Յաղթութիւնը.

Հինգերորդ Արարուած. — Դրաւատիթը:

## Ա. Ռ. Ա. Զ. Ի. Կ. Ա. Ր. Ա. Ր. Ո. Խ. Ա. Շ.

Նազար իշխանի ամառնոյին տունը Պէրփարի  
կողին վրայ ընդարձակ գահին մը, չքեղօրէն զար-  
դարսած Աշ ու ծախ բացուած են զոներ, որ հա-  
զորգակցութեան կը գնեն մերձակից սրահները ։ Նազար  
իշխանի տանը կիցն է, պատով մը միայն բաժնուած,  
Յարօի ամառնային բնակարանը ։ Երկու տունն ալ  
փորուած են ժայռերու մէջ։ Առջեւը ընդարձակ բակ  
մըն է, օրուն մէջէն կը հոսի վճիռ աղբիւր մը ծած-  
կուած հինաւուրց ու ախներով ու պաղատու ծառե-  
րով։ Դիմացը, աւելի խորը, կը տեսնուին Զէյթունի  
վանքն ու լեռները և բողաքին հիսանկարը։

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Նազար իշխանն ու խումբ մը կարեւը Զէյ-  
թունցիներ։ Վարագոյրի բաշուած ատեն, կը թուի թէ,  
Նազար իշխանը գաղտնի խորհուրդ մը կազմած է Զէյ-  
թունցիներուն հետ, որ բոլորած են զինքը ըջանակի։

— Իշխանը —

Ուրեմն պատրաստ էք կռուի զալ ինձի հետ։

† 10 †

— Խմբերգը —

Այո՛, Տէ՛ր, չը թողուլ կերդնունք քու արահետ  
 Վառուած խանդով մենք ռազմական՝  
 անդաւ մնալ կուգանք ուխտի,  
 քալենք քենէ պիտ' անբաժան,  
 դրօշ ապստամբ ժողովրդի.  
 ու մեր սրտեր միշտ յուսալից՝  
 պիտի կռուինք քեզ կուսակից.  
 «վրէժ» կըլլայ մեր աղաղակ,  
 «աղատ» կամ՝ յահ փառապսակ»:

— Իշխանը —

Քաջութեան այդ հզօր ձայնէն,  
 անկախութեան այդ ծարաւէն,  
 կը ճանչնամ քաջ որդիթքն երկրի:  
 Հպարտացի՛ր, վեհո Հայաստան,  
 անոնցմով որ հանճարդ բերկրի  
 սփռած է Դրախտիդ մէջն Եղեմական...:  
 Նախնիք չըկան, բայց իրենց խիւսն ուժեղ  
 սերունդներուն է փոխանցեր.  
 Փրկութեան համար կընդվիզէք անշեղ,  
 և պիտի ըլլաք պանծալի անձեր:  
 Կը պատրաստուին ձեզ պսակներ.  
 Կը սփռեն դափնի, ծալիկ ձեր վրան,  
 Զէյթուն քաջութեան կըլլայ միշտ օրբան:

— Խկերգը —

Ու թող ապրի մեր նազար իշխան:

† 11 †

— Իշխանը —

Ուրախ եմ: Բայց իբր ճշմարիտ դաւադիր,  
 չը մոռնանք թէ պէտք է ըլլալ խիստ ուշադիր.  
 պէտք չէ որ տանք նշան մը յայտարար,  
 ոչ դէմք մը կասկածի, միայն լուռ ու խաւար.  
 եւ պիտի տհօնենք շուտ օրերը նորոգուած:  
 Ի կատար հանելու մեր ձեռնարկն այս սիրած,  
 ցոյց տալ թէ Զէյթունն է միշտ արի, աննուաճ,  
 դուք երկու խօսք նշան ունիք,  
 — Ազատութիւն և Հայրենիք:

— Խմբերգը —

Ազատութիւն և Հայրենիք:

— Առաջին դաւադիր — (Իշխանին ուղղելով)  
 Հանդիստ եղիք դուք այդ մասին  
 կը մեռնինք քեզ հետ միասին:

— Իշխանը —

Համոզումն եմ վաղուց առած  
 որ արժան էք իմ վստահման,  
 ու կը հրճուի սիրոս անսահման  
 ձեր առնական դիրքին առաջ.  
 և զիս ո՞րքան հպարտ կըզգամ:

Ավտիքին տօնն ունինք մհնք այսօր հարսնիքի,  
 ինձ համար ցնծութեան օր մըն է կրկնակի,  
 Բայց պէտք է ժողվինք կէս գիշերին միւս անգամ  
 բանակցիլ հոս կողին վերեւը Պէրիտի:

— 12 —

Նորէն մեր որոշում պիտօն ըլլայ խիստ ծածռւկ,  
(Յած ձայնով)

Բանալու չենք մենք ծակուծուկ,  
Կռուելու համար զես քանի չենք պառաստի,  
Կը կորսուինք թէ ոչ անյօյս . . . .

— ԵՇԻՐՈՐԴ գաւադիր —  
Անտարակոյս :

Վասոս ; եղիք գուք մեր վրան,  
ու մենք ձեզի այժմ նորէն՝  
զոհոգութեան զբաւական՝  
անզարձ կ'երդնունք սրաի խորէն,  
կռւին մէջը մինչեւ տանք ցոյց  
մեր մահերով ջերմ ապացոյց :

— Խմբերգը —

Վառուած խանդով մենք ռազմական  
անդաւ մնալ կուգանք ուխտի,  
քալինք քենէ պիտօն անբաժան  
զրօշ ապատամբ ժողովրդի.  
ու մեր սրտեր միշտ յուսալից,  
պիտի կռւինք քեզ կօւսակից,  
«վրէժ» կ'ըլլայ մեր ազաղակ,  
«ազատ» կամ» մահ վառագաւակ» :

(Դաւագիրները կը մեկնին : — Հազիւթէ  
գուրս կելլեն անոնք՝ ներս կը մտնէ Յարօն :)

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՆԱԶԱՐ ԻՆԿԱՆԸ ԵՒ ՅԱՐՈ

— Յարօ — (Յանդիմանական շեշտով)  
Միշտ քու դաւագիրք . . . բայց ի՞նչ խենթ քամի .  
Նաղարեթ սրտիր մէջը կը սահիւ

— Իշխանը —

Զէյթունցին խենթի ձեռնարկ մ'ըրած է,  
անօր տակէն միշտ բարիք ծնած է : «  
Ճշմարտութիւնն այս մեր հին առածի  
ու զյըրոյթն արդար՝ կառլած առիւծի՝  
կը յուզէ միտքս ու սիրոս կը խանձէ . . . .  
Եւ հեռու փառքի, չուքի նախանձէ,  
պիտի կռւիմ ես թուրքի՝ զէմ մինչ վերջ,  
մեր տանջանքներուն տալու համար վերջ :

— Յարօ — (Հեգնաբար)

Այդ խօսքերդ փայլուն ու պերճ  
կը բերեն մեր զլխուն փորձանք,  
բերելու տեղ փառք ու պ սրծանք :

— Իշխանը —

Ա՛լ մեղ ծաղրել չի պիտի կրնաք.  
Եւրոպան մեղի կանգնած է կռնակ :

Քովս ունիմ պարիսպ չորս հաղար պարման,  
բոլորն ալ միռնիլ ուխտած անգայման:  
Բայց Թուրքն յաղթուած պիտ' տայ մենէ խոյս  
եւ պիտի ծագի մեղ Նոր-Արշակոյս:

— Յարօ — (Իշխանին խօսքը կտրելով)  
Երա՛ղ անյոյս...

Այդ ի՞նչ ցնորք... ի՞նչ միտք խարեպատիր,  
որ նոր սեւնդի զլուխն՝ է պատեր,  
Մենք ըլլանք հայուն միշտ յիմար ջորին,  
աքացի տուող գայլին ու արջին.  
Կարծիքս է երթալ միշտ Թուրքն ջուրին:  
Պաշտպանութեան ոչ ոքէն կուգայ վոշտ,  
լու է որ ապրինք անոր հետ մենք հաշտ:

(Դայրկեան մը խորհելով և ճակատը շփելով:)

Թիչ մը կաշառքով, քիչ մը կեղծիքով,  
ճոխութիւն ու գանձ կը դեղենք մեր քով:  
Տոկոս տոկոսի, հարիւրին ութսուն,  
կը բեռցնենք պարտք Տաճիկ գիւղացուն.  
քարսիրտ զ աք թիէն, անոնց եղբայր խորթ,  
մեզ պիտի բերէ ձի, այծ, կով ու հորթ:  
Անոնց փճացման ինչու խշխչամ,  
թէ ապրիլ ուզին թող գաղթեն մինչ Շամ:  
(Շունչ մը առնելէ վերը)  
Յիսուն տարուան մէջ մեր ուժով խելքի՝  
անշուշտ կը հասնինք մենք յաջող ելքի:  
Բայց, թէ որ գիմենք զէնքի ու սուրի,

Սուլթանը մեծ է, եւրոպսն հեռի,  
քիչերըս կ'երթանք դէպ հալէպ գերի:  
Ոչ սք կ'ազատի քու չորս հաղարէդ  
Թուրքի կրակէն, իշխան նազարէթ:

— Իշխանը — (Զայրացած)

Ընտրել միջոցը կեղծիք-կաշառքին,  
վայել չէ բնաւ մեր բարձր շարքին.  
ու յաղթանակի այդ խաղաղ ճամբ ան  
կը տանի հայը կորստի գամբան:  
Դեռ առուիդ մէջ ջուր չըքալած վճիտ,  
Թուրք պաշտօնեաներ կը կտրեն քու ճիտ:  
Քեզի կը թողուն՝ իբրեւ վաշխառու՝  
գերծել գիւղացին նման ոչխարի.  
տաս տարի վերջ՝ իբր հարկահաւաքիչ՝  
կը խլեն ձեռքէդ գանձդ - շատ կամ քիչ: -  
Միթէ անոնք չէ՞ն որ առաջին անգամ,  
դիտաւորութեամբ տգէտ, չարակամ,  
ոտքի հանեցին հաւատարիմ Հայն,  
— լեցնելու համար իբենց որովայն.  
ինչոէս գայլեր որ կը մինտռեն տալ կուլ  
մառախուզին մէջ՝ կորսծ գառն և ուլ:  
Ժամանակ չունինք ալ խոհեմութեան,  
եկած են մինչեւ զրան քով մեր տան  
հարիւր հազար Թուրք, Զէրքէզ, Արաբ, Քուրդ,  
դանակն է հասած այլ ևս մեր կոկորդ:  
Զէյթունը ունի զօրութիւն անբաւ  
հինգ դար կրած է յաղթողի համբւա.

պատիւն է սեպած կեանքէն զերադաս,  
Թուրբին ցովութեան տուած է միշտ դաս:  
Աներկիւզ դարնենք ու Զէյթունի՝ մենք՝  
առածն հինաւուրց չարունակ կրկնենք:

«Կը մնայ կաշին  
մեռնող գոմէշին.  
Կ, մնայ փառքը,  
զարնուող քաջին...»

(Դուրսը հրացանի հարուածնել կը լսուին:  
Աղմուկ, ճիչ ու սրինդ կ'իմացնեն ցնծալի  
խմբի մը մօտենալը:)

Բաւ է այս մեր վէճ... միտ դի՛ր... քեզ ըսե՞մ,  
ահա՛ հարսնեկան կուզան լաթն ու դարդ:  
Առաջին անգամ պիտի կոխէ այս սեմ,  
աղջիկդ, հարսնցուս, հոգւով, սուրբ գսեմ,  
աւ տաճք ձեռքի ընկանք մենք զուարթ:

(Կոչնականները ներս կը մտնեն  
հարսնեկան քայլերգով:)

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Միենալուները, Ավելիթի, ԵՐԱՅԻԿ, ՍՐԱՈՒԿ,  
ԹՕԲԱԼ, ՎԱՐԴԱՊԵՏ, ԱԶԳԱԿԱՆՆԵՐ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ  
ՈՒ ԵՐԿՍԵՐ ՀՐԱԼԻԲԵՍԱԼՆԵՐ.

ՀՀ-685-66

— Խմբերգը —  
Ավելիթին տօն է այսօր,  
իրեն համար երջանիկ օր.  
Բող ծիծալին արծագանք տան  
սիրոյ երգելն ու մեր ծնծղան:  
Հարսանիթին կը հնչէ ժամ,  
երթանք հեւսել գեղեցկին իր  
ըարակ, բարակ ոսկեթել ծամ:  
Թնդացընենք օդն ու երկիր,  
երգ ու ձայնով մեր ցնծալիր,  
(Երանիկ ու Ավելիթի քով քովի են կանգնած.  
Կոչնականները բոլոր ած են անոնց շուրջ:)

— Իշխանը — (Ավելիթին մօտենալով)

Ավելիթիք, խնամ իրըն այսօր են հաւաքուած  
իմ տաւնըս, հարսնիթիլիդ համար փայլ ու յարգի,  
ու վաղը՝ նազիլի այս դուստրը քօղարկուած՝  
դառնալով կինըդ, պիտի դայ դաւակ մեր յարկի:

Երանիկին զիտես ծնունդ,  
ու կը ճանչնաս անոնց սերունդ.  
ի՞նչ հզօր նախնիք մը գուն զիտես թէ ունին,  
արժանի են մեր արիւնին:  
(Ոգեւորուած)  
Խայտացէ՛ք, խայտացէ՛ք, հոգիք մեր հայրերու  
իտես հանդիսակ ան ալս ժամուս պարերու.  
զի ձեռքերն արի մեր սպայ քահանային,  
պիտի տան ձեր թոռան օրհնէքը երկնային:

— Խ կերպը —

Աստուած պահէ հարսն ու վեսան,  
մէկ սիրտ հողի թո՛ղ ծերանան:  
Քարը ճանկեն թո՛ղ հող դառնայ,  
հողը ճանկեն, ոսկի դառնայ:

— Թօբալ վարդապետ — (Ավէտիքին ու Երանիկին)

Հա՛րս, վեսայ, մօտեցէ՛ք,  
ի պատիւ հասակիս ու կարգիս կրօնական,  
անբիծ ու թրթըռուն զաւակներս, ներկցէ՛ք,  
որ ձեղ տամ, առաջ քան  
կատարել խորհուրդը պսակին անարատ  
հայրական իմ իրատ:

— Ավէտիք ու Երանիկ —

Հա՛յր, ձեղ ենք հնազանդ:

— Թօբալ վարդապետ — (Ավէտիքին ու զղելով)

Թէ՛ղ, Ավէտիքիք, քու նախնիքին  
պէտք է ցոյց տաս որդի մանգին.

պատուի ճամբէն թողին շաւիղ,  
պէտք է քալես անկէ ուղիղ:  
(Երանիկին զառնալով)  
Եւ դուն գանձ թարմութեան, նմոյշը չնորէքին,  
ալ պիտի ստանաս այսօր քու կարգին  
մեծ ժառանգ մը հարուստ, պատմական ու չքեղ,  
զոր պէտք է միշտ սիրես սրտովքդ սիրագեղ:  
Անուն մը քեզ պիտի տանք այլ եւս մենք բաժին  
որուն չուրջ մեր սրտեր՝ հինգ դար է կը շարժին:

— Ավէտիք Եր անիկ —

Մենք Աստուծոյ առաջ կուխտենք  
որ զայն անբիծ պիտի պահենք:

— Թօբալ վարդապետ —

Կը հրձուինք այդ ուխտին առաջ  
խաչ չի կազմած դեռ ձեր ճակատ  
Սուրբ Պատկի ժամէն առաջ:

որպէս զի միշտ ըլլաբ հաստատ,  
անխախտ պահել ձեր այդ խոստում,  
ձայնըս երկինք կուտայ ոստում:  
իմ ազօթներս, այո՛, անեղծ,  
պիտի ըլլան զոյգիդ վերեւ,  
իմ մաղթանքներն ամենանկեղծ,  
ձեղի համար են արդարեւ:

— Խմբերպը —

Մեր ազօթներն, այո՛, անեղծ,  
պիտի ըլլան զոյգիդ վերեւ.

† 20 †

մեր մաղթանըներն ամենանկեղծ ,  
ձեզի համար են արդարեւ :

— Ավէտիք ու Երանիկ —

Իրենց աղօթն , այս' , անեղծ ,  
պիտի ըլլան զոյզիս վերեւ .  
իրենց մաղթանըն ամենանկեղծ ,  
մեզի համար են արդարեւ :

— Թօրալ վարդապետ — (Յազմութեան ու զղելով)

Ու չնորհքը թո՛ղ Երկնքի՝  
իջնէ վրան ձեր ամենքի :

— Խմբելողը —

Երթանք երգել մինչեւ առառն ,  
զորաբթութիւն . . . .

Ավէտիքին տօն է ալսօր ,  
իրեն համար երջանիկ օր .  
թո՛ղ ծիծաղին արձադանք տան  
սիրոյ երգերն ու մեր ծնծղան :  
Հարսանիքին կը հնչէ ժամ ,  
Երթանք հիսոհել զեղեցկին իր  
բարակ , բարակ ռակեթել ծամ .  
թնդացընենք օդն ու երկիր  
երգ ու ձայնով մեր ցնծալիր ,  
(Դուրս կենեն :

† 21 †

— Իշխանը — (Ավէտիքին ու Երանիկին)  
Սյստեղ քիչ մը կեցէք , սրտերնիդ թո՛ղ բացուին ,  
մինչեւ որ վարը ձեր ձիերը սանձըուին :  
(Իշխանը գուրս կելնէ . կը մնան Ավէտիք  
ու Երանիկ առանձին :)

## ՀՈՐՌՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Ավէտիք , ԵՐԱՆԻԿ

— Ավէտիք —

Ո՞րքան հոգիս հոս կը հանգչի  
առանձնութեան մէջ քու չնչի :  
(Քիչ մը ամօթիսած ելէ վերջ)

Ու զատուելու ժամէն առաջ՝  
թո՛ղ տուր որ ան վայրկեան մ'անհոգ՝  
բացուի ուրախ սրտիդ առաջ .  
և աշերւա հրաբորբոք  
քու գեղսվըդ թո՛ղ դժայլին :

— Երանիկ —

Իմ Ավէտիք , հոգւոյս հայլին ,  
զէմքդէ է արեւ , լիզուդ աղու ,  
որ հոգւոյս մէջ սիրաճմլիկ ,

Կործես թէ մեզը ինձ կը հեղու։  
Ու այդ բաւ է ինձ հաւաստիք,  
թէ պիտ' ըլլանք միշտ երջանիկ։  
(Օրը կըսկսի կամաց կամաց մթննալ։)

## — Ավէտիք —

Նշանառութե ըրին երբ՝ գեռ արդանդի մէջ  
էի և դու երկար զիս սպասեցիր,  
եկուր այժմ ստանալ երախտիքն անչէջ,  
իմ օրտիս սիրավառ և ուրախածիր։  
(Երանիկին ձեռքը բռնելով։)

Նշանած անբիծ, Երանիկ անուշ,  
որ քեզի մինակ կը թռի իմ յուշ,  
եկուր ոլացիր, ոլացիր իմ գիրկ.  
Թո՛ղ քաղեն չըթներդ հրատապ ու զիրգ,  
վսուած չըթներէս համբոյր մը քաղցրիկ։  
(Երանիկ կը նետուի Ավէտիքին զիրկը։)

Թո՛ղ այս վայրկեան սուղ, հազուազին,  
Աստուածներուն իսկ սիրագին,  
մեղ սկիզբն ըլլայ կեանքի մ'երջանիկ։  
Երկնային հրճուանքի  
ոսկեղէն բաժակէ՝  
հոգիդ պիտ' ճաշակէ։  
Եկ քամել քաղցրոգի,  
հեշտանքի մը անյեղ  
նեկտարէն այս համեղ։

— Երանիկ — (Զատոռուելով Ավէտիքի զրկէն)  
Գուն ինձ կը պարզես քոզը մեր կեանքի.  
ինչըան ճոխ է այն ու չըեղ։  
Կամարին վրայ և մեր երկնքի  
կը տեսնեմ միայն մեծութիւն ու գեղ։  
Հոն աստղերն ինձ կը ժպտին յոյս.  
Ճռելով ճակատն իրենց զիցանոյշ  
պիտի ըլլան միշտ մեզի վառ կանթեղ։  
(Նորէն կը նետուի Ավէտիքին զիրկը։)

## Միասին

## — Ավէտիք —

Երկնալին հրճուանքի  
ոսկեղէն բաժակէ՝  
հոգիդ պիտ' ճաշակէ։  
Եկ քամել քաղցրոգի,  
հեշտանքի մը անյեղ  
նեկտարէն այս համեղ։

## — Երանիկ —

Երկնային հրճուանքի  
ոսկեղէն բաժակէ՝  
հոգիդ պիտ' ճաշակէ։  
Կը քամել քաղցրոգի  
հեշտանքի մը անյեղ  
նեկտարէն այս համեղ։

(Երանիկ կը քաշուի Ավէտիքի զրկէն։ Ավէտիք  
ցոյց տալով սպասաւոր մը զրան առաջ։)

+ 24 +

— Ավէտիք —

Քեզ կը կահչեն ահա՛, աւա՛զ,  
բարով մնաս, պիտի ըսեմ  
մինչ վաղ:

— Երանիկ —

Գիշերն այս՝ մի բաղզի վսեմ  
աւետարեր թող լի՞ր վաղ:

— Ավէտիք —

Եւ բունի տեղ աչքերուս չուրջ,  
ինձ պիտի գայ ոսկի անուրջ:

— Երանիկ —

Յատեսութիւն:

— Ավէտիք —

Յատեսութիւն,

(Դուրս կենեն: Սպասաւոյ  
կառաջնորդէ Երանիկի ծին և  
մեկնի զէպ ի բաղաք ցնծա  
բազմութենէն ըլջապատուած:

## ԵՐԿՐՈՐԴ

### Ա. Բ. Ռ. Ռ ՈՒ Խ. Մ. Ն

Ա Ռ Ա Զ Ի Ն Պ Ա Տ Կ Ե Բ

Պերիտ շերտան բարացրելերը

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՆԱԶԱՐ ԻՇԽԱՆԸ, ՃԵԼԱՏ, ԿԱՏԱՐ, ԴԱԻՍԴԻՐՆԵՐ

(Պարագոյրի բաշուած ատեն՝ երկու դաշաղիրներ  
կը խօսակցին միասին: Արշալյար բացուելու վրայ է:)

— Առաջին դաւագիր —

Ի՞նչ բարի լուր կը հաղորդես:

— Երկրորդ դաւագիր —

Լուր մը չունիմ տակաւին ես  
թշնամիի շարժումներէն,  
բայց լաւ գիտեմ ստուգապէս,  
որ յուզուած է Զէյթուն նորէն:

— Առաջին դաւագիր —

Նշմարներն այդ գրգըռումի  
մեզ համար կէտ մ'է զլիսաւոր:

— Երկրորդ դաւագիր —

Գանք գեռ քիչ մ'ալ համբերումի,  
կուտանք նշան մենք փառաւոր  
անկախութեան ու սօսկումի:

(Դուրս կենենա)

Ա 2 ա չ

— Ճէլատ — (Դրսէն)

Ո՞վ իմ սիրական հրեշտակ նաղելի,  
թարմ պատկերըդ է սիրոյ հայելի:  
Վարդի չուրթըդ է գդուանքի բուրվառ,  
որ պիտ' գայ առնուլ չուրթըս սիրավառ:  
Ո՞վ իմ սիրական, նաղելի հրեշտակ,  
կը ժպակ ճակատդ քաղցը երազի տակ:

Եւ իր փայլին մէջ զզլիսիչ,  
այտըդ նման արշալոյսին՝  
կաթիլ մ'արիւն զըած է բիծ  
կարծես ճերմակ ձեան երեսին:

Ո՞վ իմ սիրական, տիպար սիրուհի,  
դուն իմ Պէրիտի վայրի դիցուհի.  
թէ մերկ զրկել քեզ վերեն այս սառի:  
կը դառնայ ինծի ձմեռն ամառի:

Ո՞վ իմ սիրական հրեշտակ աննման,  
կը փայլի ճակատդ մարդըտի նման:

Եւ իր փայլին մէջ զզլիսիչ,

այտըդ՝ նման արշալոյսին՝

ծիւանի է կարծես զօծիչ

ճերմակ, անրիծ ձեան երեսին:

(Ներս կը մտնէ:)

— Առաջին դաւագիր — (Դրսէն)

Ճէլատին ձայնն Աստուած վկայ . . . :

— Երկրորդ դաւագիր — (Դուրս նայելով)

Նոյն ինքըն իսկ. (ընկերները կահչելով) Ճէլատ կուգայ:

— Առաջին դաւագիր — (Ճէլատին ուղղելով)

Ցնծութեան ի՞նչ կը բերես լուր:

— Երկրորդ դաւագիր —

Սպասե՞նք թէ ալ քաշենք սուր:

— Ճէլատ —

Մտիկ ըրէք ամէնքըդ լուռ  
ու պատմեմ ձեզ ես տիրագէմ  
ամէն ինչ որ ինքըս դիտեմ:

• • • • • • • •

Ի՞նչ սոսկալի տիսուր դէպքեր,  
տարին Ազգէն ազնիւ դէմքեր.

Ի՞նչ բաներ ու ու սարսըռուտ

պատեցին խեղճ հայոց սերունդ:

— Խմբերգը —

Բարե՛ւ, զէլլա՛տ, բաջին քալը:

— ձէլլատ —

Երջանիկ եմ ես ձեր իւ է չը (1)  
 այսպէս ծանըր պարագայի:  
 Մեղ ամեն տեղ փոս կը փորեն,  
 ամենուրեք Հայ կը ջարդեն:  
 Առիթն է, Հայը լոկ մեղի կը նայի,  
 ցոյց տալ ջարդն ու կռիւ թուրքին վայրենի:

Զ է Յ Թ Ո Ւ Ն Ի Ք Ա Յ Լ Ե Ր Գ Ը

Զէյթունցիներ ծագեց արեւ  
 Պէրզընկայի սարին վերեւ,  
 մեր սրտերու հայրենասէր  
 արթնննալու ժամն է հասեր:  
 Սորկութեան անարդ շղթան  
 գինն է յաջախ խաղաղութեան:  
 Զէնքերս առած վաղենք ի մարտ,  
 հռչակելու մեղ աղատ մարդ:  
 (Նազար իշխանը ներս կը մտնէ:)

— Իշխանը —

Կը յուզէ մեր այդ քայլերգն իմ հոգին.  
 և դուք որ անով զիս հոս կընդունիք,

(1) Զէյթունի բարբառով իւ է չ կը նշանակէ՝ քով:

Հնորհակալ եմ ես ձեզ սրտագին:  
 Ցաղթութեան յոյսը դուք ամէնքդ ունիք.  
 ու անկասկած քիչ օրէն մեր ոյժեր,  
 պիտի վտարեն թուրքերուն խուժեր:

— Խմբերգը —

Ծեր ու մատաղ տարիքն ի՞նչ փոյթ,  
 մահն ամենուս միշտ է անգութ.  
 կամ մահն առնու ամենուս կեանք,  
 կամ գերութեան փշրենք փականք:  
 Եթէ անդորրն ունի համ, բոյր,  
 կռիւն ալ չէ միշտ անհրապոյր:  
 Զէնքերս առած վաղենք ի մարտ,  
 հռչակելու մեղ աղատ մարդ:

— ձէլլատ —

Հոս Ալապու  
 ու հոն Մարտ,  
 Մերինները՝ վորը ու խոշոր՝  
 եղան արդէն ջարդ ու փոշոր:  
 Ու ըլլա՞նք վատ  
 թշնամուն ներելու այդ կորուստն ու ջարդ:  
 Եւ արդէն վաշտերը թուրքին անհաւատ,  
 Զէյթունը առնելու լարած են թակարդ:  
 Զունի՞նք այլ ես գոռող հոգի  
 սանձելու յոխորտ սնքն անոնց վայրագոչ.  
 պիտի ըլլա՞նք մենք վատովի:

— Խմբերգը —

Ո՛չ, ո՛չ, բիւր անդամ ոչ.  
ու կեցցես զուն ձէլլատ:

— ձէլլատ —

Հաղիւ՝ առանց մէկ պատճառի՝  
— անշուշտ միտյն թէ աւարի՝ —  
ճամբան մէկ խումբ մ՝ անոնց առջևս տռաւ կանդ.  
ու միթէ չուզէ՞ ան խոշորիկ մի տուգանք:  
Բայց ես որ մասնագէտն եմ այդ նուրբ արհեստին,  
իրենց դաս մը տուի ուսուցիչ ու խստին,  
զոր երբէք չեն առած և ահա իմ հունձերն:

(Ցոյց տալով մեծ քանակութեամբ զրամներ):  
Սյս փողն որ թեթեւցուց անոնց սե, մեծ խուրձերն,  
թող տայ մեղի մէկ նոր աղբիւր,  
գնելու աղ, վառօդ, զէնքեր ու գնդակ բիւր.  
Թուրքի սիրտն այս միջոցն աղէկ մը կը խոցէ:

— Խմբերգը —

Այս', կեցցէ:

— Իշխանը —

Միշտ միեւնոյն անհոգութիւն.  
և վտանգի գիմացւ զուն  
մանկութեանըդ նոյն ձէլլատն ես,  
միշտ քաջասիրտ ու պարզերես:

— ձէլլատ —

Վտանգը ծանր ու մահասփիւռ  
կտրճին է շահու աղբիւր:

— Իշխանը —

Այդ ի՞նչ հոգի կարծր ու հաստատ...:

— ձէլլատ — (Ընդմիջելով)

Զոր կուզէ զոհ մեր Ազգին Դատ:  
Պատրաստած եմ զէնք ու դաշոյն,  
բոլորն ամուր, նաեւ նախըռն,  
այս օրէն իսկ կռիւ մզել.  
Թուրքերուն դէմ վայրագ, անիսել,  
հաշուի չառած ձմեռ, աշուն:

— Իշխանը —

Լա՛ւ: Բայց պէտք է մենէ մէկն առաջանայ  
թշնամուն քովի ու մեղ լուր բերել ջանայ:  
Պէտք է դիտէ մանրապատում  
հաղար ու մէկ դէպքեր, կարեսը շարժում:  
Ունի՞ն արդեօք մեծ թնդանօթ,  
ի՞նչքան է անոնց թիւ, հեռո՞ւն են թէ մօտ.  
մահաւանդ՝ գեռ անկէ չառած հըրաժեշտ՝  
ընկերներէն մեղի ծանօթ,  
գաղտուկ մեղ քաղէ լուր մը անհրաժեշտ:

(Կատար կը յառաջանայ և կը  
կանգնի իշխանին զիմացը:)

— Կատար —

Ո՞վ տէր, ձենէ պազատազին  
կուզեմ պատիւն այդ վտանգին:

— Իշխանը —

Միթէ կին մը չե՞ս գուն, Կատար:

— Կատար —

Ինչո՞ւ արգելք մ'ըլլայ իմ սեռ,  
ինչպէս ամէն ջէյթունցի այր,  
սիրտ մ'ունենալ հայրենասէր:

— Դաւադիր մը —

Պիտի չըլլա՞նք ամօթահար  
այդ պաշտօնը թէ բեղի տար:

— Կատար —

Ամօթ չըկայ հոն ձեզ համար,  
որոշած եմ հաստատ, յամառ:  
(Նաղար իշխանի ոտքերուն փարելով)  
Իշխան, ձեր առջեւն եմ ընկած ծնրադիր,  
կաղաչեմ, ինձ տաք դերն այդ պատուախնդիր.  
մաղթանքըս է միակ, ուխտս է այդ մինակ:  
(Ոտքի ենելով ու ամենուն ուղղած)

Ու քիչ օրէն պիտի տեսնաք  
որ ձեր պատուին ես եմ արժան:  
Ապերախտնե՞ր, թո՞ղ ձեր միտ գան,  
այդեպանի մը իմ անվախ,  
ձեռնարկներն առնական, ճարպիկ ու խիզախ,  
զոր երբեմն Հալէպի շուրջ կատարեցի:  
Այս, ձեռքերո իմ կանացի  
քանիցըս կողոպուտ չառի՞ն ու աւար,  
բանի՞ Թուրք բանտապահ չեղաւ սիրահար  
այդ աւարի նուէրներուն . . . :

— Խմբերգը —

Հերսսական ի՞նչ քաջութիւն:

Սակայն ես կառէի զանոնք զլուագին,  
ու չատ քիչ էր իմ տուած զին.  
Քանի մը ոսկիով բարու ինչ կը բացուէր,  
խնդալով անոնց դօս մօրուքն ի վեր,  
քանի՞ հայ կը փակչէր ալուր փականքէ . . . :

— Ճէլլատ —

Ստորի է:

(Քիչ մը կարմրելով)  
Կը յիշեմ, օր մը նստած իր նժոյգ,  
Ա Բարդի մէջ ձեւց իր վրաւ իր շուրջ:  
Բնիկրներս Քարու Չուլլո՞ւ, Տէլ-Ալին Զէրքէզ (1)  
— որ հաղիւ գոլ այս են իւ այս ձեռքէս —  
յանձնեցին շուրջ միւնինց այիւն մաթախ սուր,  
կառարի ալնարկին առջեւ խիստ ու սուր:  
Գուգ սկէ մ'ընկնէի պիտի ես կարգիս,  
Զըլլայի օդնութեան ձայնած Սուրբ Սարգիս:  
Ճանչնոլով որ հայ եմ, ծիծաղով մը կուշտ,  
մարթին է ն գուրք բաշեց զրած իր փամփուշտ:  
Զորս տարի մնայինք միւտ իրեն կատու,  
եւ երկու նահանգ մենք ըրինք հարկատու,  
ի միջի այլոց և Հալէպին, Ատանան . . .  
կան ասոր փորին մէջ զեւն ու սատանան:

— Կատար —

Ու հիմակ կրցայ համոզել զձեզ:

(1) Կիլիկիոյ մէջ հաշակուած ասպատակներ:

— Խմբերգը —

Կատա՛ր ալ գնա , հմայեցիր մեղ ,  
 (Նաղար իշխան պահար անին մէջ փակ-  
 ուած թռողիթ մը կը յանձնէ կա-  
 տարին , ականչին բան մը փսփսալով : )

— Կատար —

Ծածկուած թիւրքմէն կնկայ լաթին տակ ,  
 կանցնիմ անվանգ լեռներն ու գետակ ,  
 ու կեղծելով զիս Ավշար / ուզտապ ան  
 կանցնիմ վր սններն ու անոնց աւան :  
 Զը պիտի ընկճէ բան մը իմ եռանդ ,  
 ու փոխան թղթին զոր տուիք աւանդ ,  
 եթէ հ արկ ըլլայ , զին կուտամ գաղտուկ ,  
 ճամբան՝ պիղծ թուրքին՝ համբոյր մը տաղտուկ :  
 Կէս ժամէն կերթամ , չուտ մ'այժմ ծպտիմ ,  
 ու երեք օրէն հոս ձեղ կը ժպտիմ :

— Խմբերգը —

Կատար Երկինք քեզ հետ ըլլան ,  
 Աստուած նաեւ մեզ պահապան :  
 (Կատար կը մեկնի : )

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵՒՆՈՑՆՆԵՐԸ , ԲԱՅԻ ԿԱՏԱՐ

— Խմբերգը —

Իշխան , այժմ ի՞նչ պէտք է լնենք :

— Իշխանը —

Կը կարծեմ թէ մեղ անհը սժետ  
 է որ քաղաք՝ Զէյթուն՝ իջնենք .  
 պէտք է որ մեր ձայնի սուր չելտ ,  
 եղբայրները կոչեն զէնքի ,  
 փշելու անյապաղ  
 գժիեմ յուծը տառապանքի .  
 մէկ խօսքով մենք անվախ ,  
 Թուրքին տանք գըռո ; և ընտիր մի գաս  
 արթուն առիւծի շարժումին խիզախ :

— Ճէլլատ —

Հնտիր խրատ մ'այս՝ կուտաս :

— Խմբերգը —

Երթանք Զէյթունցուն վառել սիրոը տաք ,  
 մենք ապաւինած իր զրօշակին տակ :

Վառուած խանդով մինք ռազմական՝  
 անդաւ մնալ կուգանք ուխտի ,  
 քալենք քենէ պիտ՝ անբաժան ,

Դրօշ ապստամբ ժողովրդի :  
Ու մեր սրտեր միշ յուսալից՝  
պիտի կռուինք քեզ կուսակից .  
«Աղքա՛ կամ՝ մեր աղաղակ  
«Աղքա՞ կամ՝ մահ փառապսակ» .

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍՍՐԱՆ

Ե Ր Կ Բ Ո Ր Դ Պ Ա Յ Կ Ե Ր

Զեյրուեի հրապարակին վրայ

ՄԱՐԴԻԿ , ԿԻՆԵՐ , ՄԱՆՉԵՐ , ԱՂՋԻԿՆԵՐ ,  
ՀԱՅ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

(Վարագոյրի քաշուած ատեն մեծ ոգեշորուրիւն մը  
կը տիրէ ամրոխին մեջ :)

— Կիները — Սև ճուղիր հագած իրենց  
լոթելին վրայէն :

Երիկ ու նշանած Հայրենիր կուղէ  
ձեզ , աւաղ՝ մեր զրիէն այսոր պիտ խզէ :  
Առնական է բայց մեր հողին  
նաև առջեւն՝ այս վտանգին ,  
զոր կուղենք ձեզի հետ բաժնել հաւասար ,  
մենք կուղենք հետեւիլ ձեզ լեռներ ու սար .

Երգել ձեր բաջութիւնք ու ձեր յաղթ ան սկ .  
ու եթէ պէտք ըլլայ՝ կանգնիլ ձեզ կռնակ :

### — Մարդիկը —

Վատահ եղիք մեր թեւերուն ,  
սրտերն ունինք մենք գեւերուն .  
պիտի գառնանք ու մենք գինով՝  
վըրէժ լուծած արեան գնով :

### — Խմբերզը — (Միահամուռ)

Քսան տարի մենք լուռ կեցանք ,  
հարկեր տուինք մեր զոյքն ու ցանք :  
Թուրքն ալ ձեղ պէս մարդ է ըսին ,  
համբուրուեցէք զուք միասին :  
Մեր զէնքերը առաւ Զերմասայտ (1)  
մեր պահապան երկաթներն այդ :  
Արդարութիւն՝ խաբեց թէ՝ կար  
ամբողջ Հայոց Աղքին համար :  
Բայց տուաւ մեզ թուրքն աքացի ,  
զիտելու տեղ բաղաքացի .

զմեղ հասուց չատ զէշ աւուր ,  
մեզ ալ կանչեց նաեւ կ ե ա վ ու ր :  
Ալ չենք տահիր այսպիսի կեանք ,  
պիտ՝ չախչախենք ճնշողին գանկ :

(1) Անզլիացի գնդապետ պատուիրակ , որ Քեամիլ և  
Սայիտ բայաներուն հետ հաւաքեց Զէյթունի զէնքերը ,  
խոստանալով որ Հայաստանի համար բարեկորոդում  
պիտի զործագրուէր :

Թո՛ղ մեղ ծագի Նոր-Արշալոյս,  
Կամ աշխարհէս կորինք անյօյս:  
— Երգեցիկ խմբէն ժարդ մը —  
Նաղար իշխանն ալս կողմ կուգայ,  
Ավէտիքն ալ իրեն հետ կայ:

— Խմբերգը —

Մեր մեծերուն բարեւի գանք,  
Զոյց տանք անոնց սէր ու յարդանք:  
(Ոմբոխին մէջ կը մտնեն Նաղար իշխան,  
Հետոյ Ավէտիք ու Թօբալ վարդապետ:)

## ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵՒՆՈՅՆԵՐԸ, ՆԱԶԱՐ ԻՇԽԱՆ, ԱՎԵՏԻՔ ՈՒ ԹՕԲԱԼ  
ՎԱՐԴԱՊԵՏ: ՅԵՏՈՅ ԿՈՒԳԱՆ ՍՈԲՈՒԿ ՈՒ ԵՐԱՆԻԿ

— Խշխանը —

Անպարտելի է միշա Զէյթուն,  
մանաւանդ վտանդի է երբ իր գոյութիւն:  
Թո՛ղ սկսի մեր պատերազմ,  
ու ցոյց տա՞ք թշնաւուն քաջերը պնդակաղմ:  
Թուրքեցն են մեր արեան ծարաւի ու քաղցած,  
բորենիի պէս քարչ ու ցած...:  
Ա՛լ բաւ է ապրեցանք անոնց հետ ստրուկ, հաշտ,

օգնութեան երթանք մեր խեղճ եղբարց՝ կռուին դաշտ:  
Պէտք է վազենք գէպ ի ֆունուս:  
Ու հոն՝ երբ թշնաւին յաղթը ուած՝ մեղ տայ խցս.  
պիտի դառնանք բանակ շարել,  
Շէմպէք լեռնէն մինչ Ղըլավուզ  
Ամրոցը չորս կողմէն ամուր մը պաշարել:

— Խմբերգը —

Դէպ ի ֆունուս:

— Թօբալ վարդապետ —

Ու Տէր Սատուած հետն ամենուս.  
մեզի ըլլայ թո՛ղ զօրավիդ,  
փշրել թուրքին լուծն ու չարիք:

— Խշխանը — (Շարունակելով իր ճառը.)

Մեր պաղերը քաջ, արդար, բանիբուն,  
այս քարերուն մէջ մեզի զրին բոյն,  
ու պահպանումը փրկութեան յոյսին՝  
հինգ դարէ ի վեր զրին մեր ուսին:  
Առաջինը չէ այս մեր կըսիին:  
Ո՞վ չունի մեր մէջ ութ վէրք իր թեւին...:  
Վարժուած ենք ապրիլ անօթի, անքուն,  
բաւ է որ մնայ Զէյթունը կանգուն:  
Կերած չե՞նք տարին տասներկու ամիս  
միթէ հավէ ճ-ջուր (1) ուտելու տեղ միս...:

(1) Զէյթունցիներու սովորական կերակուրն է հավէ ճ-ջուր, պղպեղ խառնուած ջուրի հետ:

Բաւէ որ մեանք աղատու յոխորտ,  
շըլլաւ Ռուբէնի զաւակները խորթ:  
• • • • • • • • • •  
(Քիչ մը չունչ առնելէ վերջ)  
Այո՛, Հայաստան կը կանգնի աղատ,  
եթէ մղենք այս կոփւը յաջող,  
ու պիտի ըլլանք մենք իր հարադատ  
պաշտպաններ Բուռը մեր եղբարք ճնշուող,  
այն ատեն, պիտի ժողվին գունդագունդ,  
նոր Ռուբէնի մը դարձեալ տալ ծնունդ:  
(Սրբուկ ու Երանիկ ներս կը մտնեն:)

— Սրբուկ ու Երանիկ —

Ավէտիք . . . :

— Ավէտիք —

Անուշ նշանած և դուն իւմ մայրի՛կ,  
հեռացէ՛ք, մի՛ գաք ըլլալ խոչնդոտ:

— Սրբուկ —

Միթէ չե՞ս զաւակս, է՞ր կըլլաս երկչոտ:

— Ավէտիք —

Երբէք չեմ վախնար, բայց հողիս սիրուն  
կրնայ անտարբեր մնալ ձեր սիրոյն:  
• • • • • • • • •

Ո՞վ տեսիլ զիս որ երկար շոյեցիր,  
այժմէն եղիր դուն այլեւս ցանուցիր . . . :

(Երանիկին մօտենալով:)

Երանիկ, ձայնը մարտի վողերուն,  
յեղակարծ տարած միտքը զէպ հեռուն.  
քանդի եթէ զամ զնդակներէն ողջ,  
կատարած կռուին մէջ պարտքերս ամբողջ,  
պիտի ըլլամքեղ աւել արժանի . . .  
Երազս է հարուած տալ թուրք իսուժանի,  
պիտ' շալիեմ այսօր զէնքն արժաթօղակ՝  
քաջալի հօրս որ տայ թեւերուսս խակ  
կորով, ու կոփւ մղեմ սաստկայոյզ  
պատուին ու Երկրին համար ամենուս:

— Խըբերգը —

Դէպի ի ֆոնուս:

— Թօրալ վարդապետ —

Դեռ չի մեկնած, ո՛վ ժողովուրդ,  
կռուին մէջ տալ մահուան յագուրդ,  
կօ՛ը հնամք զձեզ:

(Ամբոխը միահամուռ կը ծնըազրէ:)

Հ'զօր Տէ՛ր, լոէ մեր հըրածեշտ,  
ու ալօթքն որ քեզ կը թռչի.  
տո՛ւր մեզ, Տէ՛ր, ոյժ անհըրածեշտ,  
փառքին համար քու Սուրբ Խաչի:  
(Այլովոր ոտքի կելնէ:)

— Խըբերգը —

Ձէյթունցիներ ծաղեց արեւ  
զկիՊէլղըայ սարիզ վերեւ,

Ժեր սբտելու հայրենասէր  
արթննալու ժամն է հասեր:  
Ստրկութեան անարդ չղթան  
զինն է յաճախ խաղաղութեան.  
զէնքերս առած վազենք ի մարտ,  
հռչակելու մեղ աղատ մարդ:

Մեր ու մատաղ, տարիքն ի՞նչ փոյթ,  
մահն ամենուս միշտ է անգութ.  
կամ մահն առնու ամենուս կեանք,  
կամ գերութեան փշրենք փականք:  
Եթէ անդորրն ունի համ, բոյր,  
կռիւն ալ չէ միշտ անհրապոյր:  
Զէնքերս առած վազենք ի մարտ  
հռչակելու մեղ աղատ մարդ:

## ԵՐՈՌՈՐԴ

### Ա. Ր. Տ. Ր ՈՒ Ա. Ծ

---

Յունուսի շրջակաները: Քարի կամուրջը Զահանի  
վրայ. բրբական բանակը Զահանի ափին, Մուշիկ-  
Ցերի Հայ զիւղին մօտերը:

## ԱՐԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

---

ՄԱՅՈՎԱՐ ԲԱՇԱ. ԹՈՒՐԲ ՍՊԱՆԵՐ,  
ԶԻՆՈՒՈՐՆԵՐ, ՄՈԼՎԱՆԵՐ

— Մազհար բաշա —

Թո՞ղ հնչեն վողերն այդ վրաններէն ներս,  
արթնցնել զօղերը ու իմ սպաներս.  
Կա՞ այգը մօլաներ թո՞ղ շուտ մը կարգան՝  
ո՞ր Ալլահի առաջն ոտքի  
բոլորս կանգնինք մենք աղօթքի.  
ու սպաներս յետոյ ինձ գան,

— Մօլաները —

«Ալլահի զօրաւոր, Ալլահի զօրամիտ,  
մէկ Ալլահ կայ ամենաղէտ.

ու Ալլահի մեծ, սուրբ ու ճամարիս,  
իր Մարգարէն է Մուհամմէտ :

(Մօլլաները կերպեն այս աղջիքը, վրաններուն չուրիշ  
դառնալով, ձեռքնընին չեցա միի կցած իրենց ականջնե-  
րուն : Աղօթքի ժամանակ զօրակ սն ամբոխը կերպուադէ .  
մօլլաները միայն կը կենաւ սոտքի : Աղօթքէն վերջ, որ կը  
կատարուի երկու ծնրալլուութեամբ, սովաները կը չար-  
ուին Մազհար բաշային չուրիշը )

— Մազհար բաշա —

Սուլթանին վեհափառ,  
կամքովը մեծափառ,

Մենք հոս ենք հաւաքուած կռուելու, դինուոր  
ու սպայ, այէտք է որ  
ծառայենք մեր տիրոջ հաւատարմաքար  
(Ամէնը կորաքամակ կը խոնաշ հին )

— Խմբերգը —  
Թո՛ղ կեցցէ մեր Սուլթան :

— Մազհար բաշա —

Ու ամբողջ Հայաստան  
կանգնել է մեղի գէմ իբր ըմբաստ ստի,  
գամբնկց ընելու մեր տէրը Առութան,  
թո՛ղ ալժ մէն գզրդի,  
մեղ անկ է ճզմել այդ միտքն ամբարտաւան :  
Ազգարկեցի արդէն պատգամ  
Ֆանտացոյ խեռ ու անզգամ,  
եթէ կամին քլան գըլուժ

իրենց կրօնին անմիտ ու խուժ,  
ճանաչելու զՄուհամմէտ,

Պիտ՝ բանանք մենք անոնց գուռն երջանկութեան . . . :

— Սպայ մը —

Ե՞թէ մերժման որոշում տան :

— Մազհար բաշա —

Կը քաշեն գլխոնուն փայլակներ ու շանթ . . .

Կը ճանչնամ անոնց ես քաջերն անվկանգ,

ու բերի սոսկալի, կռուի մահաշուք,

վագրերը Արաբի, սիւ, սովորուկ.

Հայ-Լերան գիշատիչ գալլերն անվեհեր,

տան հազար բորենի Զէրբէզ, նաեւ մեր

Զէյզէկներն Իզյիբի՛ խանլով անհկռւն,

բարձրուղէց գիւրաթեր, ահեղ ու անքուն,

եկոն ըլլալ մեզ զինակից . . .

Բնչ սոսկում մէկ գալ մերժակից . . .

անոնց մէկ հար՝

երկուքի կը ճեղքէ ապաւաժն ու քար . . .

— Սպայ մը —

Այդ ուժով ուրիշըն մենք լիուը կուտենք :

— Մազհար բաշա —

Ու եթէ անյապաշ կ եւ ավուր ներն իրենք

չուտով մէ չը գան միզ ըլլալ անձնատուք,

հաւատ ու կեանք փնտակ իսլամութեան դուռ :

պիտ' ջարդենք մենք զանոնք անգութ, անխնայ,  
մարդիկը, պառաւներ, կիներ, երախայ.  
մայրերը որ յղի կան,  
ծերերն հարիւր հինգ տարեկան:  
Զարդումները բայց Մարաշի,  
ինչպէս նաև Ալապաշի,  
թերեւս իրենց թոյլ տան խորհիլ,  
վճռուած են թէ ո՛չ, անոնց պէս կորիլ...  
կըսե՞մ, իցիւ թէ այս մեր աղդ  
զանոնք ընէ հլու, զգաստ,  
մեր կամքին առջեւը չուտ մը խոնարհիլ:

— Մօլլաները —

«Ալլահ զօրաւոր, Ալլահ զօրամիտ,  
մէկ Ալլահ կայ ամենապէտ.  
ու Ալլահի մեծ, սուրբ ու ճշմարիտ,  
իր Մարդարէն է Մուհամմէտ»

---

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵՒՆՈՅՆՆԵՐԸ, Տէր ՍԱՐԴԻՍ, ՅԵՏՈՅ ՄՈՒԶԻԿ  
Տէրէցի ԾԵՐՈՒԽՆԵՐԸ

— Սպայ մը —

Կերեւայ թէ կուգայ  
չէ մի հայ քահանայ:

— Մաղհար բաշա —  
Թո՛ղ շուտ գայ:  
— Սպան —  
Ահա՛ նա:  
(Ներս կը մտնէ Տէր Մարդիս:)

— Տէր Մարդիս — (Մտնելով)  
Գոնուսէն՝ ես պատգամ՝  
պ ստասխան տալ կուգամ:  
Ժողովուրդս իմ բերնով ձեղ իմաց կուտայ  
որ պիտ' մնայ միշտ Հայ ու Քրիստոնեայ:  
Հլու է օրէնքին, չի մերժեր իր տուրք,  
բայց չուզեր ուրանալ Աղդն ու ըլլալ թուրք:

— Մաղհար բաշա —  
Վճիռըդ կարծակէ լեզուդ վայրահաչ:  
— Տէր Մարդիս —  
Գիտենք թէ կը մեռնինք միայն մէկ անգամ,  
Մահիկին համար գուք, մննք գրիսծ Սուրբ Խաչ:

— Մաղհար բաշա —  
Ի՞նչ կորստի զիտե՞ս, անգդամ,  
զոռոզ լեզուդ ձեղ կը տանի:

— Տէր Մարդիս — (Ճարահատ:)  
Անգթութեան ձեր սոսկալի,  
հրկիզումի, սպանութեան,

անանուն և նուրբ տանջանքի,  
թռըքիդ յատուկ վայրենութեան,  
ինչպէս նաեւ առեւանդի:

Այս', բայց հագ չէ, մեր սրտեր խանդակ  
պիտի ցոյց տան զօրքիդ դիմաց  
թէ ինչպէս կը մեռնինք մեր կրծքին համար  
Այս', պիտի տանք ձեզ իմաց,  
որ եթէ մըն այլիք գուր միւս բարբարոս,  
պատկներ ունինք մենք Աղդի մարտիրոս:

— Մաղնար բաշա — (Հեգնօրէն և զսպուած բարկու  
Մի՛ կարծեր թէ բեղ հոծ կը պ ձհեմ դըւտի.  
կարմըրած կասկարո՞ւն սեւ զլիսիդ առաւի  
պիտ' անցնել տամ' եթէ չի կապիս զան փաթթոց  
և թէ նոյնն ընել չի իրատես ըու մարդոց:

## — Տէր Սարգիս —

Արշումնիս է հաստատուն,  
վճիռները գործադրէ զուն:

— Մաղնար բաշա — (Հըսմայելով իր գնդերուն  
Հնչեցէ՛ք փողերը, զինուորներ, օ՛ յառաջ:

## — Տէր Սարգիս —

Ինչ հարկ կայ անօգուտ տեղ երթալ ձեզ առաջ,  
առաջուց եմ տուած հազօրդն ու արձակում,  
զիւղերուն վրան պէտք չունիք տալ յարձակում:  
(Վրանէն քիչ մը հեռուն կեցած  
պատգամաւորները ցուցնելով.)

Սա՛ ծերին տարիքն է հարիւր հինգ տարեկան,  
այդ պառաւն ալ կարծես մահուանն է ուրուտկան.  
տասը հատ մը իրենց մահմին մէջն են ինկած,  
Քսան հատ ալ փայտով, գետինն ի վար կըած:  
Ակռայի բեռ չունինք, գլուխնիս է ճաղատ,  
պարծանք մը կըլլայ քեզ մեղ ընկը տալ ճշատ:  
Մեր մարնին վրայ, բայց յօշոտուած ու անթաղ,  
պիտ' ծաղի, թէպէտեւ քիչ մը ուշ ու գանդաղ,  
այս երկրի վրկութեան Արշալոյսն ու Արեւ

## — Մաղնար բաշա —

Ինչ քիչ փառքով մենք արդ արեւ  
պիտի տանինք այս յաղթանակ,  
Հայերդ չառած մեղ գէմ դանակ:

## — Տէր Սարգիս —

Մի՛ ըլլար այդպէս զուք չուտով մը զուարթ.  
գեռ չըրիք մեր գեղերն աւեր, գետնա հարթ:  
Դիժերուդ, անպէտներս ենք հոս ենթարկու:  
մինչ ուրիշներ - քաշերն հուժկու, -  
պատրաստի կան հոն աներկիւղ  
պաշտպանել ձեզի դէմ իրենց տունն ու զիւզ.  
ու կըսպասեն ձեզ ակնապիշ:

## — Մաղնար բաշա —

Բաւական է քու այդ լպիրչ...:  
իր զուար երբ մահն է ձենէ գեռ հեռուն,  
որպէս եի հանդարտիս, բաշենք քու լիզուն:  
իմ զինուորներ, օ՛ն ձեր զործին,

տուէք առաջ դաս մ'այս պղծին:  
(Յոյց կուտայ Տէր Սարգիսը:)

— Խմբերզը —

Ո՞վ սրբազան խաչ,

տուր մեզ հոգի քաջ:

(Զինւորին մէկը գետնահար կընէ զՏէր Սարգիս սր  
հարուածով մը և կը քաջէ անոր լեզուն:

Զինւորները կը յարձակին քանի մը Հայ տներո  
վրայ որ կը գտնուին մերձակայց կիրճին մէջ և կը սկսի  
այրել, աւարել ու ջարէել: Անոնք կը նետուին մանչե  
րուն վրայ. կը բռնեն ոտքերէն և կը գարնեն անոն  
գլուխները ժայռերուն դէմ: Մօլաներ ժայռերէն վա  
կը գլատորեն ծերերն ու պառաւները: Զինւորները կ  
բռնեն հարսերն ու մանչերը առեւանգելու համար:

(Զոհերու քանի մը ճիշերն ու կցկտուր խօսքերը և  
խառնուին մերթ ընդ մերթ երաժշտութեան, որ մինա  
կը ներկայացնէ այս տեռարանը:)

— Ուրիշ զինւոր մը — (Կնոջ մը մօտենալով) (1)

Մահը և կամ երթալ հարէմ:

— Կինը —

Ես մեռնիլը կը նախնտրեմ:

(Ինքզինքը ժայռէ  
մը վար կը նետէ:)

— Փաթթոցաւոր չէյլս մը — (Խումբ մը կոյ-  
սերու հեղնաբար:)

Շամէն մինչեւ հոս կը սուրամ,

որպէս զի ձեզ ընեմ ի ս լ ա մ:

(1) Այս կինը ֆանուսի նշանաւոր գերդաստան  
Տիկին Տնտեսեանն էր:

(Սուրին ի ձեռին յարձակելով:)

Երկա՛ր ապրիս դուն մեր Սուլթան:

— Հայ կոյտերը —

Զար գեւերը զայն կուլ տան.

պիտ' չի զպիս մեր կուսութեան:

((Երենք զիրենք ձահանի մէջ կը նետեն:))

(Հիսուէն աղմուկ, զէնքերու չառաչում ու հրացանի  
հարուածներ կը լսուին. ամէնքը շոյց կուտան թէ զին-  
ուած զունդ մը կը մօտենայ:)

— Խմբերզը — (Դրսէն)

Ա՛լ պրծանք, ա՛լ պղծանք.

Հա՛ բաջեր Զէյթունի, Հայ Ազգին են պարծանք....

— Մաղկար բաշա — (Խելակորոյս:)

Ի՞նչ, Զէյթո՞ւն - 0'ն, սթա՛փ.

յարձակող կ ե ա վ ո ւ ր ը չուտ ընենք ուժաթափ:

(Երս կը մոնեն ֆռնուսի և Զէյ-  
թունցիներու զինուած խումբը:)

— Խմբերզը — (Դրսէն:)

Ճնշողներ դուք բիրտ ու խժուժ,

երգուած էլք մեր մահն ու զոյժ,

մեր երկրին ենք ահա՛ պաշտպան.

պէտք է որ տաք մեղի շատ տուժ,

չանցած կիրճէն այս պահապան:

• • • • • • • • • • • •

(Ճշմարիտ պատերազմ մը տեղի կունենայ, Թուրքերը պաշարուած Հայ գնդերէն, հետղնետէ կը նահանջեն ու կը փախչին մեծ կրուստով, Հայերը ներս կը մտնեն բեմին վրայ, երբ Մագ'ար բաշտ դուրս կելնէ միւս կողմէն իր սպ սակայտով ու կը փախչի: Հայերը կը հալածեն զանոնք: Բեմը պահ մը պ սրբակ կը մնայ:)

• • • • • • • • • • • •

— Մագ' մը —

Անօդուած է կռուիլ այս տեղ:  
ո՛վ տէր, կիրճ մ'է չափազանց նեղ:

— Մաղհար բաշա —

Փախչինք ուրեմն արագօրէն.  
պէտք է զանոնք կրճի խորէն,  
դաշտը բաշենք ձարպիկօրէն:  
կը հետեւին մեզ անկասկած,  
հո՞ն, կը յաղթենք վատահօրէն,  
տալով իբենց բիւր բոց ու կայծ,  
(Կը փախին հալածուած և  
տեսարանը պարապ կը մնայ:)

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

---

ԵՐԱՆԻԿ, ՅԵՑՈՅ ՃԵԼԱՄՏ

— Երանիկ — (Սուանձին)

Շուտ քալած են անոնք. չի կրցայ ես, աւազ,  
հայնիլ. մեկնած են գիւղէն վաշ...  
Բայց ինձ՝ այս զոհերն ու բեկորներն արիւնհօս,

յոյց կուտան թէ կուռած են հոս:  
Քանի՛ այսպէս անմեղ զոհեր

իբենց յոյսն ու երաղ սլօրէն են զոհեր...  
Անոնց յացանքն ու մեծ ոճի՞ո.

չարութեան դէմ տալն էր վճիռ.  
կը սիրէին սրտով ջերմիկ,

Աղատութիւն ու Հայրենիք:  
Ուրերը պահապան իբենց մօր սպապատ,

ու զեցին — միշտ մնալ բրիստոնեայ ու ազտու  
Բայց ասոնք ալ չը կ սն... քաջերն ո՞ւր են անվակ,

առաքեալներ անոնք խիզախ  
արդար կեանքի՝ և ազատութեան:

Գուշակողներ դուք փրկութեան,  
անկախութեան ախոյեաններ,

Ազգին անմահ գիւցազուններ,  
ո՞ւր էք դուք...:

(Կանչելով)

Ավէտիք... սակայն հոս ոչ ոք կայ,

Ինձ մինակ ձայներուս արձագանքն ետ կուգայ։  
Աւաշ՝, չեն լսուիր իմ ճիշերըս այս տխուրու  
Ավէտի՛ք, Ավէտի՛ք . . . : — Միեւնոյն սարտովէլ լուռ։  
Ո՞վ երազ հարսնիթի, երէկ գուն որ բերիթ  
հոգւոյս մէջ յոյս երջանկալիր,  
ո՞ւր փախար դուն, ըսէ ինձ, ո՞ւբ . . . :  
(Կը թափառի մտախոհ։)

— Ճէլլատ — (Դրսէն։)

Ո՞վ իմ սիրական հրեշտակ նազելի,  
թարմ պատկերը է սիրոյ հայելի.  
վարդի չուրթը է գգուանքի բուրփառ,  
որ կուգայ առնուլ չուրթըս հրավառ։  
Ո՞վ իմ սիրական նազելի հրեշտակ,  
կը ժպտի ճակատդ քաղցր երազի տակ։  
Եւ իր փայլին մէջ զբլիւիչ  
այտըլ՝ նման արշալոյսին՝  
կաթիւ մարդիւն դրած է բիծ,  
կարծես ճերժակ ձեան երեսին։

— Երանիկ —

Ի՞նչ, Ճէլլատ . . . վիշտը այժմ այլ ևս թող փարատի,  
Ճէլլատ ինձ լուր մը աայ պիտի։  
(Ճէլլատին ուղղելով  
որ կը ներս մտնէ։)  
Ո՞ւր է, Ճէլլատ, իմ Ավէտիք։  
— Ճէլլատ — (Բարեւելով)  
Բնաւ պէտք չէ անհանդստիք։

Քիչ ատենէն կըլլաք մի զոյգ։

— Երանիկ —

Ստո՞յգ։

— Ճէլլատ —

Ես որ կըսեմ։

— Երանիկ —

Ի՞նչ բախտ լսեմ . . . :

— Ճէլլատ —

Այո՛, զայն որ գուք կը սիրէք,  
չութով կուգայ ձեզ միանալ,  
բայց դափնիով մը ճակտին սէգ։

Թշնամին փախաւ — իր քաջութեան, նոյնքան ալ  
վառ խօսքերուն չընորհիւը։

մենք իրեն կը պարտինք յաղթութեան պատիւը։

— Երանիկ —

Փա՛ռք քեզ Տէ՛ր։

— Ճէլլատ —

Կը լսէ՞ք երգերը. հա՛ կուգան մեր գնդեր։

— Խմբերգը — (Դրսէն երգելով յաղթութեան երգը,)

Կեցցէ՛ մեր Զէյթուն, կեցցեն իր քաջեր։

Թուրքը հաւու պէս մենէ կը փախչէր։

Պէրիտի լեռնէն առած ենք սնունդ,

ձիւնին մէջ մեղի տուած են ծնունդ։

բազուկ ու կրծեր ունինք երկաթի,  
արիւն կը խմենք վոխարէն կաթի;  
Քսան հազար թուրք մէկ օր թաղեցինք,  
ու ձահանն այսօր նորէն ներկեցինք:  
Չառնուիր Զէյթուն, Հայուն է վախը վ,  
Թուրքը մեր առաջ եղած է վախով:  
Կեցցէ՛ մեր Զէյթուն, կեցցեն իր քաջիկ,  
Թուրքը հաւու պէս մենէ կը փախչէր:  
(Կը հասնին Զէյթունցիները: Անոնց  
մէջն են Նազար իշխանը և Ավէտիք:)

## ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԵՐԱՆԻԿ, ՃԵԼԱՍ, ՆԱԶԱՐ ԻՇԽԱՆ, ԱՎԷՏԻՔ, ԽՄԲԵՐԳՐ

— Ավէտիք —

Երանիկ . . . :

— Երանիկ —

Ավէտիք . . . :

(Կընզրկախառնուին:)

— Իշխանը —

Դժխուկի:

Ավէտիքն այսօր ձեր սիրոյն է արժանի:  
Այո՛, դուք չեք խաբուած զայն ընտրել կողակից,

ու կրել հերոսին անունը փառալից:  
Յաղթութեան դրօն՝ որ մեր առջեւէն կը փայլի,  
Կանգնած է շընորհիւ բաշութեանն իր անգարտ,  
ու կրնաք իր մասին դուք ԸՆԼԱԼ միշտ հպարտ:

— Երանիկ —

Բոլոր իմ կեանքս ունի և զիտեմ որ կարծէ.  
Ճնլատն իսկ դիւցազ մը զայն տեսնել կը կարծէ:

— Ճէլատ —

Ճնլարտութիւնն ըսի միայն:

— Խմբերգը —

Թշնամիներն եթէ փախան,  
մենք անոր խրամոյսին կը պարտինք, մանաւանդ,  
անվախ սրտին հայրենաւանդ:

— Ավէտիք —

Ինձ համար ի՞նչ գեղեցիկ օր,  
քաջերու և հետ քաղել պարծանք մը ահազին,  
կազել մեր ճակատին դափնիներ փառաւոր:  
Բայց զանոնք խառնելով հարսնիքի մեր ծաղկին,  
ո՞վ Երանիկ, ստացիր դուն,  
թանկագին նուէլներ իմ սրտէս «իբասուն»:

Միտսին

— Երանիկ, Ավէտիք —

Երկնային հրձուանքի  
ոսկեղէն բաժակէ,

մեր սիրտ պիտ' ճաշակէ:  
կը բամենք բաղցրողի,  
հեշտանքի մը անյեղ  
նեկտարէն այս համեղ:

— Խմբերգը —

Երկնային հրճուանքի  
ոսկեղէն բաժակէ:  
ձեր սիրտ պիտ' ճաշակէ:  
Քամեցէք բաղցրողի,  
հեշտանքի մը անյեղ  
նեկտարէն այս համեղ:

— Իշխանը —

Ժամանակ շատ շունինք կորուստի համար  
պէտք է որ թըրերէն դեռ առնենք համար:  
Կորունիս սկսանք յաջող այս ելքով,  
օգտիլ պէտք է անիէ հասուն, լուրջ խելքով:  
Ժամանակ չունինք մենք տալ զինադադար,  
դէպ յառաջ ընթանանք անվախ, անդադար,  
ու կոռունինք ամէն տեղ:

— Խմբերգը —

Կռուխնք մինչ վերջին յեղ,

— Իշխանը —

Ֆռնուսին համար ալ չկայ փտանգ,  
բաւ է որ հոս փոքրիկ պահակ մը թողունք:  
Թշնամին փնտռելու ուրիշ տեղ երթանք,

ծխելով վառող իբր Ազատութեան խունկ:  
Շուտ հասնինք Զէյթուն ու Ամրոցն անիծած՝  
զլտորի բռնութեան հետ մեր լեռնէն ցած....:

— Խմբերգը —

Խսպառ ջնջել անհաւատը՝  
մեր միակ իղձն է ու, մեր հաւատը:

— Իշխանը —

Ուրախ եմ. վասն զի յաղթել կասկածին՝  
առաջին գրաւն է մեր յաղթութեան.  
Խօսքերու փոխարէն գործեր թող պարծին,  
շուտով մը Զէյթունի իջնենք դէպ ճամբան:

— Խմբերգը —

Դէպ ճամբան  
(Երգելով)

Կեցցէ՛ մեր Զէյթուն, կեցցեն իր քաջեր,  
Թուրքը հաւու պէս մենէ կը փախչէր:  
Պէրիտի լեռնէն առած ենք սնունդ,  
ձիւնին մէջ մեզի տուած են ծնունդ.  
բազուկ ու կրծեր ունինք երկաթի,  
արիւն կը խմենք փոխարէն կաթի:  
Բսան հազար թուրք մէկ օր թաղեցինք,  
ու Ճահանն այսօր նորէն ներկեցինք:  
Զաւնուիր Զէյթուն, Հայուն է վախը վ,  
Թուրքը մեր առաջ եղած է վախով:  
Կեցցէ՛ մեր Զէյթուն, կեցցեն իր քաջեր,  
Թուրքը հաւու պէս մենէ կը փախչէր:

**ԶՈՐՈՐԴ  
ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

---

Ա Ռ Ա Զ Ի Ն Պ Ա Տ Կ Ե Ր

Չորանվիտ մը, որուն խորը կերեւի  
Շեմպիք յերան հեռանկարը:

---

Ա Ռ Ա Զ Ի Ն Յ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

(Զէյթունի աջ ու ձախ եղերքներէն կարկաչելով կը  
հսուին երկու գետակներ ժայռերու մէջէն և կը միանան  
քաղաքին ծայրը:)

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Յ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

(Քաղաքին արեւմտեան կողմը կայ Զէյթունի բերդը,  
կառուցուած բարձրաբերձ ու միակտուր ժայռի մը վրայ.  
բերդը Յարօի բնակարանն է: Մազէ - Կամուրջը մը  
կանկուսու լերան ստորոտին թոյլ կուտայ անցնիլ գետա-  
կին վրայէն գաղտազողի և մազոցել բերդն ի վեր: Բերդի  
արեւելեան կողմը, աւելի ցածը, կը գտնուին Զէյթունի  
տները: Հեռուն, Յարօյի բնակ սրանին դիմացը, Ագ-  
Տաղի կողին վրայ կը տեսնուի թրբական զօրանոցը:  
Անկէ զէպի ձախ, աւելի վերը, Պէրզընկայի միակտուր  
գահավէծին ստորսար կերեւնայ Ա, Աստուածածնի  
վանքը, Արջապատուած ծառաստաններով և կը ներկա-  
ցնէ մութ հեռապատկեր մը:)

---

**ԱՐԱՁԻՆ ՏԵՍԱՐԱՆ**

---

ՅԱՐՕ, ՅԵՏՈՅ ԹՈՒՐՔ ԼՐՏԵՍՆԵՐ

(Արշալյսի բացուելը մօտ է: Վարագոյրի քաշուած  
տեսնարանը դատարկ է: Մերք լեր մերք բնդանօրի  
ու հրացանի պայրումները ցոյց կուտան թի կոիչ մը ծագած  
է: Քանի մը վայրկեան յետոյ, Յարօ կերեւնայ աշտարակին  
ժայրը և կը դիտէ:)

— Յարօ — (Առանձին)

Բացուած է արշալյոցն և հստակաւին  
կանկուսակ կողմ չի տեսայ մի նշար:  
Մումբերը կիմացնեն, բայց, որ կը կուրին.  
ու վազ, պիտի լայ ըանի՛ անուշ մայր:

(Պալս մարդ գալուտագո զի կը մօտե-  
նան Մազէ - Կամուրջին. Կը  
պահուըտին ժայռերուն մէջ և սա-  
կայն Յարօ կը նշարէ զանոնք:  
Մուրը լրտեսներն են:)

Ազմուկ... չուք մը գետի ափին...

մարդիկ... կարծեմ կը խուսափին:

(Զայն տալով)

Ի՞նչ կը տեսնեմ: ո՞րոնք կուգան:

Ուրիշ մըն ալ. — Զորսի չափ կան:

(Նարէն ձայն տալով)

Զայն տուէ՛ք, և ի՞նչ, պէ՞տք է որ

Ճեղ կետ խօսիմ սպառնական :

(Երբ վերջին լրտեսն ալ կը  
տեղաւորուի, ամէնքը միա-  
սին կը պատասխանեն : )

— Լրտեսները — (Խորհրդաւոր շետով մը )

« Թագաւոր »

— Յարօ —

Այդ խօսքն է շատ խորհրդաւոր . . . :

Կիմայնէ ընկերի գալը . վերջապէս :  
(Չայն տալով : )

Եւ որպէս զի մենք գաղտնապէս

ու անվախ խօսակցինք, ահա՝ կիջնեմ չուտ,  
բերդն ի վար հոդ՝ քով ժայռերուդ :

— Լրտեսները —

Ճեղ կըսպասենք մենք ձորամուտ :

(Յարօ բերդին ստորոտն ի վար  
կիջնէ, ժայռերուն մէջէն, նեղ  
ու սանդիմածեւ շաւիղէ մը : )

— Յարօ — (Թըքաձեւ բարեւելով : )

Բարեւ ճեղ, մեծարդոյ իսլամ քեսիներ,  
անվախ ինձ մօտեցէք, չեք ըլլար գերիներ :

Այս ձորին մէջ ոչ ոք կը տեսնայ մեր չուք,  
սատանան անգամ չի լսեր մեր չուկ,

Սուլթանին եմ թաղովս հլու հպատակ,  
ծուղակ մը չունի ես, ոչ չար նպատակ :

Այս դիշեր քունս եղած էր ծանըլո բիւ,

Դիտեցի ձեր գալը մինչ լոյս անհամբեր .

ու քսան անգամ վար իջալ այս անձաւ :  
Փա՛ռք Տիրոջ, պիտի կրնամ ես ձեր միջոցաւ,  
ուղարկել մեծազօր առ իմ Տէրութիւն  
յաղթութեան համար պէտք եղած դիւրութիւն :

— Լրտեսապետը —

Գովեստը ձեր ծառայութեան

ուղարկած ենք առ վեհ Սուլթան .

Ճեղ պիտի բաշխէ ան պատիւ ու նշան,  
ձեր տան հիւր պիտի զան մեր բէկն ու բաշան :

Եւ ահա ձեր սիրոյն՝ վտանգն աչք առած՝

ազդն եկանք տալ վճռին մահու՝ կամ՝ փառաց :

Հաւատարիմ ծառայ պիտի ըլլար մեղ

և փրկիչ բարերար ձեր քաղաքին վէս,

եթէ դուք հաւաքէք ամենուն զէնքեր,

ու փրկիչ կըրագէն Ամրոցին չէնքեր :

Պէտք է որ Նազարը ձգէ իր դանակ,

ու երթայ անձնատուր ըլլալ մեր բանակ :

Ո՞ր Ազգը պիտի առյ ճեղի ապաստան .

ու չունիք վառօդ մէկ տօնախմբութեան :

Ֆոնութի մօտ երէկ, այս՝ յաղթուեցանք,

բայց պարզեմ ահա ճեղ մեր յաղթութեանց ցանկ :

(Ծունչ մը առնելէ վերջ : )

Սլապաշն հազիւ մեղ տուաւ բիչ մը կուրծ .

անպաշար՝ շուտ Զէյթուն փախաւ մազապուրծ :

Մարաշի մէջ Շէքէր-Տէրէ ու Հայ-Թաղ (1)  
հըրակէզ՝ եղան մեր ցասումին մատաղ:  
Հայ-Լիրան գիւղերուն (2) մենք տուինք թալւն,  
ու անոնք ապրեցան որ իսլամ եղան:  
Քիւթի մէջ առինք մենք անբաւ ստակ,  
ուր Հայը ջարդեցինք իրեւ նապաստակ:  
Պիւծիկ՝ հինգ հարիւր Հայ տուն գետնափոր՝  
կարգեցինք իրար մէջ քոյրը հետն եղբօր:  
Ուրֆայի մէջ քառքով մենք ըրինք հանդէս,  
Կաթօլիկ ու Բրոտ հոն չըրինք անտես.  
քսան օր մեղ անոնք դէմ զրին կատղած,  
Թաղերուն դռները ամուր մը կղպած.  
Վերջապէս, բայց, զանոնք ձգեցինք ծուղակ,  
Ժամուն մէջ վառեցինք բիւր կին ու տղաք:  
Անիժեալ Սուէտիան մեղ երկու տարի  
գոց մնաց և Հայով կը կառավարի.  
Պարոններ (3), բայց, երկար չեն կրնար խառնել  
պիտ՝ երթանք զանոնք չուտ գերի առնել:  
Զէյթուն մ'ալ ունեցանք Փայտախ քովեր,

(1) Բնդէ. կոտորածին ջարդուած Հայ թաղերունեներ:

(2) Սարըլար գիւղը միայն:

(3) Հնչակեան գործիչներու տրուած մակղիր. Կիլիկիոյ հարաւային բաժնի մեր ներկայացուցիչ Պ. Շաւարչ Շիւմանեանի խումբը կակնարեկ. — Այդ խմբ չնորիւ Թուրք կառավարութիւնը չի կրցաւ ո ո է Հօջարդել Քեսապի, Սուէտիոյ, Անտիոքայ և Պէյլան կողմբը:

չը թողուց Թուրքերուն քոյն այծ ու կովեր:  
Մօտակայ երեք զիւղ ժողված Զօրք-Մարգարան,  
դարձուցին զայն որջ մը՝ Հայու մարդասպան:  
Գաղաններն այդ թէպէտ մեզ աղէկ իսածին,  
բայց նորէն վ. ալ ի լու ոտքերուն գացին:  
Թէ մեղայ չըսէին, չը ապրել մէկ Հայ,  
բոլորն ոլ թափէինք պիտ' Տէլի-Զայ (1):

Վերջապէս,

Այնթապի քաղքին մէջ Անգլիոյ գոռող՝  
Թագուհին կանչեցինք օր ցերեկ մենք բող:  
Գօնսօներ ու գեցին մենէ ու տիկան,  
պահապան դնելու առջեւն իրենց տան...:

(իբրեւ թէ կարեկցելով)

Ինչու գուն խեղճուկ Հայ, մոռցար քու տէրբդ,  
թողուցիր գարաւոր սգրկի գերբդ:  
Արդեօք բնէ յոյսերով գուն այգքան մեծցար,  
չէ օր մեզ է կանակ Մօսկովին Մեծ-Զար:  
Զէ յթունցիքդ որ անով մեղ մէշտ կը պարծիք,  
ինչպէս մեր ձեռքերէն ալ պիտի պըծիք:  
Վաղն, իշխան Յարօ, մենք կուզենք պատասխան,  
Նազարի ոտքերուն տեսնել մեր չլթան:

— Յարօ —

Ես գիտեմ շառնց օր երկայն է ձեր սուր.

(1) Փայտախ Օհաղլը Հայ-գիւղին եղերքէն հոսող  
կատաղի և արագալաղ գետակ մը:

Ճեր զօրաց քաջութիւնն ինձ կուտայ սաբսուռ  
 Զի պիտի ձգեմ որ իմիններս՝ անխոհ  
 ու յիմար ձեռնարկի մ'ըլլան չուտով դոհ:  
 Բայց նաղարն ընելու համար զի՞նաթափ,  
 պէտք կըլլայ մարմինը ընել հրատապ.  
 Տի ուզեր կոբէէն զատ լսել ան բան,  
 պէտք է որ կոտրենք կոյժն իր ջրի ճամբան:

Ուստի,

(Լրտեսներուն մօտենալով)

Ես՝ ելքի մը համար յաջող, վերջնակայ,  
 թէ ինչպէս խորհեցայ կարգադրել մեր շահ:

— Լրտեսները — (Ուրախացած)

Պատմեցէք ու պիտի գրենք առ Բատիշահ:

— Յարո —

Ահա՛ իմ որոշումս: — Մեր խենթեր դեռ հաղիւ  
 սկսան տալ կռիւ:  
 Հարուածներն անոնց դեռ, սակայն, չատ թեթև և  
 ամբոխի միտքը չուտ մը պիտի դեղեւեն:  
 Ամրոցի զօրքերու ռումբերէն հեռացան,  
 և հեռուն զարնելու չունէին հըրացան:  
 Նաղարը, բայց, եթէ թողու բիչ վերջ դաշտը,  
 և բչէ իր վաշտը,  
 Քլուրն ի վեր սեղմել Ամրոցին պաշարում,  
 այն ատեն բաղբին մէջ կը ձգեմ բաժանում:  
 Կը պարզեմ իմ բերդէս սպիտակ դրօշակ:

Վհատման սև թոյնը - թո՛ղ կանչեն զիս Վասակ -  
 պիտի տամ ամբոխին.  
 Նախանձն ու վէճերը անոր մէջ պիտ՝ բղխին.  
 պիտի փախչին անկէ չատեր,  
 Սյու բաւական չէ սակայն դեռ,  
 պէտք օգտիր պառակտումէն,  
 գնդերնիդ գան ամէն կողմէն,  
 ըմբոստն ընել չուտ բնաջինջ,  
 ու յաղթական կանգնիլ: Ալ է՞նչ  
 աւելի...:

— Լրտեսները —

Սքանչելիի:

— Յարո —

Ալ կարթնայ կիմակ Զէյթուն,  
 գացէ՛ք հարկ է խոհեմութիւն:

— Լրտեսապետը —

Քիչ օրէն այս քաղ բին կըլլաք դ ա յ մ ա գ ա մ,  
 թէ մտնենք հոն փառըով նորէն այս անգամ:

— Լրտեսները — (Մէկոի)

Ուստած ենք մենք, այո՛, չորս հարիւր տարի,  
 աւերին մէջ անոր միշտ ցանել գարի:  
 Մատնութեանդ համար վարձք պիտ՝ տանք բեղ մահիճ,  
 Ամուզի դաշտելուն ընդարձակ ճահիճ:

— Լրտեսապետը —

Մնա՛ք բարով:

## — Յարօ —

Երթա՛ր բարով:

(Լրաւններուն հեռանալը դի-  
տելով ու քիչ մը մոտահագու)

Տէր Աստուած, զո՞վ կանչեմ, Մուհամեմէտ թէ Յիսուս,  
փրկելու համար մեր հոգին նել օրերուս:  
(Մտախոհ կը թափառի:)

Այս անգամ Հայերուն չի ներեր Օսմանցին,  
վասնղի մեր խենթեր ոլ չսփր անցուցին:  
Գործած չեն որ մայսքան սոսկալի մեծ ոճիր,  
Հայու մը տեղ տաս Թուրք կոտրեցին իբր ոջիլ:  
Պէշէնըն ու Քէթմէն, Թանուրըն ու Տէօնկէլ,  
Մզկիթին փրայ հոն մէկ մէկ Մաչ են տնկել:  
Կապանէն Սիսնէ մինչ Բողանդի ու Զոխախ,  
գաշտերն ու լեռներ Թուրք արիւնով են շաղախ:  
Նէտիրցիք, Ղումարցիք Քուլդ, մինչեւ Անապատ,  
Թուրք աշխարհն աւելած դարձած է անտպատ:  
Զուխր սաար (1) իմ արտերս ալ պիտի չի կանչին,  
Ֆռնուցիք վառած են թրքաչն իմ կանչին:  
Մոլեռանդ իսլամներ, կարծեմ մօտ հարիւր հատ,  
չուզելով խաչ հանել, եղած են զլիսահատ:

(Ինքն իրեն խօսելով)

Յանցանքներն այս բոլոր ա՛ւ Յարօ, մէկդի թող.  
— Անզրունն ալ վառած է Ֆռնուսի խնիթ Բարթող (2):

(1) Զուխրասար կամ Զուզուր-Հիսար Կանչիի Թուր-  
քերէն անունն է:

(2) Գեր, Բարթողիմէսս վարդապետ Թագաճեան:

Հոն վկայ է կանչած Թորոսըն ու Հեթում,  
Տէրութեան պալատին մէջ ըրած է խթում:  
Ապրանքներն, ոսկիներ Հայերն են հաւաքած,  
և ի ու լամ Դատի ի ին մուշտակն է ինը հագած.  
գրպանէն բոցին մէջ նետած է Սուրբ Դօր ան  
նարեկն է դրեր հոն իբրեւ թէ սուրբ խորան:

Առնելիքս ա՛ւ կորաւ, չեմ փնտռեր իմ արջառ,  
բայց ո՞ւր պէտք է զիմեմ. Հայո՞ւն թէ Թուրք Տաճար,  
փրկելու համար մեր կեանքերն ու ընտանիք...  
(Վճռական շարժումով մը:)

Ժամանակ չի մնաց, շուտ ելնեմ մեր տանիք,  
տեսնել թէ յաղթանակն որ կողմը կը դառնայ:  
Չեմ կարծեր որ Հայը բան մընել կարենայ:  
Ես երբէք, քանի որ իմ փորբա մնայ կուշտ,  
ովէտք չունիմ նետելու Թուրքերուն մէկ փամբուշտ:  
Կորուստներս պիտ՝ հանեմ. մերայնոց հակառակ,  
պիտ՝ օդնեմ Սուլթանին՝ որ Նազարն անսռակ՝  
առնու իր արժանի պատիժ. և քաշրէն ներս  
պիտ՝ առնեմ զօքերին, որ փրկեն թազու, իմիններս:

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

(Արեւը ծագած է. հրացանաձզութիւնը հետղիւու կը սաստկանայ. հեռուն կը տեսնուին Զեյրունցիները որ կը յարձակին Զօրանոցին վրայ։)

ՅԱՐԾ, ԵՐԱՆԻԿ, ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐ

— ԽԱՐԵՐԳը — (Դրսէն)

Թո՞ղ սրտերնիս խայտան ի տես,  
մեր մօտալուտ ազատումին,  
վազենք կոռուի մենք վառ հանդէս,  
Զօրանոցի գրաւումին։

(Հրացանաձզութիւնը Էւացնելու  
չափ կը սաստկանայ. յարձակող-  
ները կը մօտենան Զօրանոցին։)

(Յարօ կը տնկէ աշտարակին ծայրը  
սպիտակ գրօշակ մը և խոկոյն կան-  
հետի տեսնելուն պէս Երանիկն, որ  
կուգայ հեռուէն, չըշապատուած  
խումբ մը Զէյթունցիներէ։)

— Երանիկ — Կարմիր դրօշակ մը ծեռքին։  
ինչո՞ւ խուլ կը նստիք, ոռումբն երբ կը գոռայ,  
երբ որ աշխարհն այնտեղ կեռայ,

պատրազմի մէջ փրկութեան համար  
մեռնիլ և կամ ընել թուրքը գետնահար։  
Ի՞նչ նստել էք մուկերու պէս  
սըլըքտոծ, ծակուծուկ մտած դուք այդպէս։  
Զէ՞ր խպնիր որ կիներս գանք հոս՝ հրապարակ,  
զձեղ ընել մենք խայտառակ։

— ԽՃԵՐԳը — (Դաղտնի խրատուած Յարօէն)  
Ի՞նչ բանի բայց կրնանք օգտակար ըլլակ,  
երբ տռողջ չենք մենք ամէնքս ալ։

— Երանիկ — (Կայտառ ծերերն ու սմբած երիտա-  
սարդները ցուցնելով։)

Զիւնը մինչ կրծերնուդ անցաք Ախըռ-տաղ,  
չորս անգամ Մարաշը ըրիք հարկատու։  
Թուրքը ձեր առաջ չէ կրցած յոխորտալ.  
առիւծներդ է՞ր այսօր գարձած էք կատու։  
Ասկէ զատ ո՞ր օրեր, գայլերդ անօթի,  
պիտ' կղպէք դուռը ձեր գատարկ խանութի,  
Տաս տարի ձեր ցաւեր գուք լուռ կորոճաք,  
քանի որ Թէճըէն (1) բաժ չառիք յՇըրիճէք։  
Աւ ելէք. պիտ' դանէք ձեր ծերութեան բոյժ  
առնելով աւարի մսէն քիչ մը ոյժ։  
Քաջերդ որ սմբած էք մերկ վրան գետնի,  
վազեցէք Ամրոցէն աւարել զութնի (2)։

(1) Զէյթունցիները Էրիճէքէն անցնող Թէճիրցի աշի-

րէթը սըի տակէն կանցնէին և բաժ կառնէին։

(2) Թանկազին կերպաս։

Բնաւ ձեր առարկնիր ինձ չեն դօրաւոր,  
կը կարծուին հոս նենգաւոր:  
Պէտք է գոչեր միահաւատ.  
— և Ծեր ու մատաղ տարիքին ի՞նչ փոյթ  
մահն ամենուս միշտ է անգութ։  
Զէյթունցի մը կայ որ ուղէ ըլլալ վատ:  
— Խմբերգը — (Ողիւորու ած)

Ո՛չ, ո՛չ, այդ չէ հնար, միշտ ունինք մենք խանդ,  
հոն երթալ յանչերուն, դոնէ, տալ եռանդ։  
Օն, կերթանք քեզի հետ միանալ բաջերուն,  
կը զեայլէ զիս ձեր այդ լեզուն.

— Երանիկ —  
Երթանք։

— Խմբերգը —  
Երթանք։

— Երանիկ — (Սպիտակ դրօշակիը նշանաբելով)  
Այդ ի՞նչ վատութիւնն... դարձելի ծուղակ,  
որ մեր անունը կընէ նշաւակ...:

— Խմբերգը — (Զարմացած)

Ի՞նչ։

— Երանիկ — Աշտարակին ծայրը ցուցնելով։  
Տեսէք բերդին ծայր դըրօշն այդ ճերմակ,  
որ կը ծածանի . . . իր վատ ու ոչինչ  
հողիին գործն է . . . այդ է նշանակ

Դաւաճանութեան, անջինջ աղարտի,  
Դոր ինք հօրեղբայրս, չար, կաշառակեր,  
կանգնած է քաղքին համար թակարդի։  
Պէտք է շուտ խղենք, ենենք բերդն ի վեր,  
ու տնկենք դրօշն այս կարմիր ու փայլուն,  
որ գիմարութեան կը պարզէ նշան,  
ու թող զայն Թուրքեր նշանաբեն հեռուն,  
Զէյթունին փառքի՝ իբրեւ շքանշան։

— Խմբերգը —

Այս։

(Երիտասարդները կը խուժեն բերդէն ներս։ Երա-  
նիկ կերեւի աշտարակին ծայրը. կը խզէ ու կը բղքտէ  
ճերմակ դրօշակը. անոր աեղ կը տնկէ կարմիրը ու յե-  
տոյ վար կիջնէ։)

— Երանիկ — (Բերդին մէջէն)

Եւ գուն՝ մեր հայրերուն որդի անարժան,  
ա՛ռ, պարգեւ ստացիր իբր աղգակործան, —  
մահ։

(Ու կը զարնէ Յարօն գնդակով մը!)

— Յարօ — (Մեռնելով)

Ա՛հ...:

— Երանիկ —

Ու Հայրենիք ալ թող պարծի,  
Յուղայէ մը ան կը պրծի։

(Բերդէն գուրս կելնէ, իբրեւ  
հետ մտնող մարդերուն հետ  
ու ամբոխին դառնալով։)

Հսէք ինձ թէ չէ նախնտիր  
քան ճերմակն՝ այդ գոյնը կարմիր.  
և այդ գոյնն անբիծ, այդ գոյնը կրակին,  
չեռացներ արիւնն մեր մէջ երակին:

— Խմբերգը —

Այո՛, մենք զայն կը նախնտրենք.

— Երանիկ —

Օն այժըմ դէպ յառաջ վարենք:

— Խմբերգը —

Վաղենք:

(Ու կերթան կը խառնուին Զօրա-  
նոցին վրայ յարձակող խմբելուն:)

— Ընդհանուր խմբերգը —

Թո՛ղ սրտերնիս խայտան ի տես,  
մեր մօտալուտ աղատումին,  
վաղենք կոռուի մենք վառ հանդէս,  
Զօրանոցի գրաւումին:

• • • • • • •

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Պ Ա Տ Կ Ե Ր

Քարայր մը՝ որուն մէջ աղբիշր մը կը հոսի:)  
Պատերազմը կը տերէ անընդհատ:)

Ավետիք, մահացոյ կերպով զարնուած՝ պառկած է  
քարայրին մէջ: Երանիկ հատած է անոր կռիկ:

—=—

— Ավետիք —

Երանիկ . . . :

— Երանիկ —

Թո՛ղ հոսեմ վէրքիդ վրան կարեվէր՝  
քիչ մը այս ջուրէն անուշ, զովաբեր.  
իր մաքրութեան մէջ քեղ պիտ' ըլլայ բոյժ:  
Նաեւ ջերմիդ է օգտակար,

եթէ թըջեմ շուրթըդ տկար.  
ծարաւդ անցնելով, կուտայ քեղի ուշ,  
ու ջիղերուդ քիչ մըն ալ ոյժ:

քանզի հոսելով ձեռքէս կուսական,  
միթէ չէ ցաւիդ բուժիչ բալասան:

— Ավետիք — (Մեղմիւ)

Այո՛ . . . :

(Ոգեւորուելով)

Ի՞նչ է ան:

(Ուժով)

Ճայթքը սաստկացան . . . :

Թերագոյն ճիգն է, շարժումն յեղակարձ,  
վերջինն անկասկած:

— Ավէտիք — (Խանդաշատելով)

Հրեշտակս Երանիկ, անձնուէլ հոգիս,  
միտ դիր խնդրանքիս:

— Երանիկ —

- Անուշ Ավէտիք, ի՞նչ կուղես, խօսէ' -

— Ավէտիք —

Սրի դիցուհիս, վերջին խնդրանքս է,  
ազնիւ ու խիզախս հոգւոյդ է արժան.  
գնա՛ տեսնել թէ թշնամին դաժան  
դեռ չէ՛ յաղթուած, չէ՛ անձնատուր  
ինչպէս նաեւ ինձ լուր մը տուր  
մեր կտրիձներու վարքերու մասին.  
վազէ՛, Երանիկ, հոգիս միասին:

— Երանիկ —

Որպէսզի զքեղ հոս մինա՞կ ձգեմ...  
Երբէ՛ք:

— Ավէտիք —

Անուշ հոգիս քեզ կաղաչեմ.  
յանուն սիրոյս, թող անխոռվ,  
սիրտըս առնու ըիշ մը կորով,  
երբ բերես ինձ լուր մը բարի.  
վերջին իղձն է հոգեվարի:

— Երանիկ —

Խենթութիւն չէ՛ այդ, Ավէտիք:

— Ավէտիք —

Երանիկ...:

— Երանիկ —

Օ'ն, թո՛ղ ըլլայ բոլոր կամքըդ,  
Աստուած պահէ ինձ քու կեանքըդ:  
(Երանիկ կը մեկնի!)

## ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

— Ավէտիք — (Առանձին)

Պատերազմը կը տեւէ դեռ  
եւ իմ հոգիս կը փրփրի,  
ու կռուիլ չեմ կարող բաջերուս առընթեր:

Միշտ կռիւը կը գրգռի,

ու, աւա՛ղ, ես հոս կամ վէրք մ'առած աղէխարշ...:  
ուժասպառ՝ ալ իջնել անկարող եմ ճամբան.

Կը դիտեմ միս մինակ թուրս՝ ինկած դետնաքարշ...:  
Սակայն ի՞նչ փոյթ է ինձ դամբան.

անվեհեր կոխկոտեմ պիտի այս տիսուր սեմ  
անհունութեան ու խաւարի:

Սակայն, դեռ չի մեռած, Երանի թէ լսեմ,

- ԶԵՅԹՈՒՆՆ է յաղթական ու Ամրոցն աւարի:  
 . . . . . . . . . . . . .  
 ԱՇ կեռայ արիւնը... գլուխը կը վառի...  
 ու նորէն զառանցը  
 կամփոփէ իմ անձը...:  
 Երանիկ, երանիկ, մեռնելէս ե'կ առաջ,  
 Թո՞ղ քովդ թռին իմ վերջին շունչն ու հառաջ...:  
 (Երանիկ ներս կը մտնէ, պառկած  
 պատգարակի մը վրայ, զոր երկու  
 մարդ կը կրեն իրենց ուսին:)

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՔ, ԵՐԱՆԻԿ ՈՒ ԵՐԿՈՒ ԲԵՐՈՂՆԵՐԸ

— Երանիկ — (Բերող մարդերուն)  
 Կուղեմ այլ եւս որ հոս կայնիք.  
 (Կանչելով)  
 Ավէտիք:

— Ավէտիք —  
 Երանիկ... ի՞նչ կազդուրիչ լուր:

— Երանիկ —  
 Թուրբեր կը լան մեղ անձնատուր:  
 — Ավէտիք — (Ուրախութեամբ)  
 Սառյդ...

(Խորին վշտով մը)  
 Վէրք առիր գո՞ւն ալ...:  
 — Երանիկ — (Իր ցաւը ծածկելով)  
 Բան մը չէ, պէտք չէ վշտանալ...:  
 — Ավէտիք —  
 ԱՇ, ոչի՞նչ... բայց արեանն որ կիջնէ մազերդ ի վար,  
 աւազ, ես եմ միակ պատճառ...  
 ու տեսնել բեղ մեռնիլ ինձի մահ մ'է կրկին,  
 ներէ՛, աչքով մը կարեգին...:

— Երանիկ —  
 Զեռքէս կիյնայ ա՛լ հրացանս,  
 ու կը քաշուի նաև իմ ձայնս...:  
 (Կիջնէ ճաղէն ու կը պառ-  
 կի Ավէտիքի կողին:)

Իղձս է մեռնիլ հոս բու կողին:  
 . . . . . . . . . . .  
 Ուզեցի մօտ երթալ և առի իմ բաժին.  
 գնդակ մը եկաւ ու գլխիս մէջ խրեցաւ:  
 Ուրախ եմ բաղդըս է, ես չունիմ ոչ մի ցաւ.  
 աշխարհի մէջ ո՞վ է կատարեալ երջանիկ...  
 (Կը սեղմուի Ավէտիքի կողին:)

Կը լսե՞ս պարտութեան վայնասունն, Ավէտիք:

— Խմբերգը — (Դրսէն)  
 Փա՛ռք:

— Ավէտիք —  
 Երանիկ...:

ՀԻՆԳԵՐՈՐԴ  
Ա. Ր. Ա. Ր. ՈՒ. Ա. Մ.

+ 80 +

— Երանիկ —

Այլ եւըս թող որ մեր պատկը հարսնիքի  
կատարենք համբուրով մը բարով մընաքի . . . :

(Ու կերկարի Ավէտիքի կո-  
ղին, զայն համբուրելով:)

— Խմբերգը — (Դրսէն)

Պարծանք ու թող կեցցէ յաւիտեան մեր Զէյթուն . . . :

— Ավէտիք —

Փա՛ռք . . . ու գոհ կը մեռնիմ կուրծքըս ալ պատուտուն:

— Երանիկ — (Նուաղեալ)

Ավէտիք, Ավէտիք . . . :

— Խմբերգը — (Դրսէն)

Յաղթութիւն:

— Ավէտիք — (Նուաղեալ)

Երանիկ . . . :

— Խմբերգը — (Դրսէն)

Թող տապալի չար բռնութիւն:

Ու սրտերնիս խայտան ի տես  
մեր գըրօշին խաչապաշտի.

Խուժենք անվախ Ամրոցէն ներս,  
շուտ զայն տալու ԽԸԼԸՓԸԸՄԻ (1):

(Ուշր Աստուածածնայ Վանքը: Տեսարանը կ'անցնի  
եկեղեցին ներսը, որ լուսաւորուած է կանքեղերով ու  
մումերով. զարդարուած է խաչէրով ու արծարապատ ա-  
յօրագրքերով: Խորանին առաջ դրուած են Թրքերէն առ-  
ևնուած ոսկեկոռ սուրերն, արծարապատ զենքերն ու Օս-  
մանեան դրօշակը:)

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՆԱԶԱՐ ԻՇԽԱՆԸ, ԹՈԲԱԼ ՎԱՐԴԱՊԵՏ, ՃԷԼԱՍ, ՍՐԲՈՒԿ  
ՄԱՐԴԻԿ, ԿԻՆԵՐ, ՔԱԶԱՆԱՆԵՐ, ԴՊԻՐՆԵՐ

(Թօրալ վարդապետ ու դահանաները շարուած են  
խորանին առջեւ: Երիկ մարդիկ ժամուն աչ կողմը կայնած  
են: Աչակողմեան դասն են Նագար իշխանը, Ճեղատ ու  
ճշանաւոր անձինք, Զախակողմեան դասն են Մրրուկ ազ-  
գական տիկիններով միասին: Կիներն ու օրիորդները շար-  
ուած են ժամուն ձախ կողմը: Միջուղի դրուած են եր-  
կու դագաղ. Ավետիքինը աչ կողմ ու Երանիկինը ձախ:  
Նոյն կարգով կայնած են, մեկ շարքի վրայ, դպիրներն ու  
երգեցիկ գուսանները դագաղներուն շոշրչ:)

— Խմբերգը —

Օվաննայ. թող մեր չարական

(1) Զէյթունի բարբառով, աւարառութեան:

արձագանք տայ այս կամարէն։  
այսօր մեղ օր մ'է տօնական։  
թո՛ղ մեր ձայներն այս Տաճարէն՝  
Երկինքն ի վեր դէպ եթերին՝  
ամենազօր Աստուած թռին։

— Թօբալ վարդապետ —

Եւ, այս', չնորհակալ ըլլանք մենք առ Աստուած,  
որ մեզի օգնութեան այսօր ձեռք էր տուած։  
Գործն առաւ մենէ սուշ ողջակէզ. ի՞նչ արգել,  
յաղթութիւնն ա՛չա՛ շուտ եկաւ զայն պըսակել . . .  
Ո՛վ Տէր, զուն որ տուիր մեզի այս յաղթանակ,  
կտրուն ըրիր և մեր դանակ,  
ճոխացնել անդտմ մ'ևս պատմութե ան մեծ էջեր,  
գոհութեան քեզ ծունկ հնք իջեր։  
(Ամէնքը կը ծնրադրեն։)

— Խյբերգը —

Օվսաննայ. թող. մեր շարակտն  
արձագանք տայ ալս կամարէն,  
այսօր մեղ օր մ'է տօնական։  
թո՛ղ մեր ձայներն այս Տաճարէն՝  
Երկինքն ի վեր դէպ եթերին՝  
ամենազօր Աստուած թռին։  
(Ոտքի կելնեն։)

— Թօբալ վարդապետ —

Վկայենք բայց նաեւ, սիրելի իմ որդիք,  
անձնազոհ պետերնուս մեր անհուն երախտիք։

Արթնութեամք մ'անձնուէր, ջանքերով լուսամիտ,  
անոնք մեղ հասուցին փառքերուն մինչ զենիթ։

Զեզ՝ առ Նազար իշխան, ողջոյն  
քաջերուդ, առ Ճէլլատ, ողջոյն։  
Մեր ծափերուն էք արժանի,  
հոգին ունիթ քաջ Վարդանի։

— Խյբերգը —

Զեզ՝ առ Նազար իշխան, ողջոյն  
քաջերուդ, առ Ճէլլատ, ողջոյն։  
Մեր ծափերուն էք արժանի,  
հոգին ունիթ քաջ Վարդանի։

— Իշխանը —

Շատ փորբիկէ, սակայն, փառքըս,  
կատարեցի միտյն պարտքըս.  
թէ արժանիթ մ'ունիմ ես պարզ,  
կամ հաւատով ու յուսապարծ։  
Կրնայի՞ անմրմունջ ես դիտել, ատոյգը,  
Հայրենիքիս դառըն սուգը.  
մընայի՞ անկսկիծ մահուանը երբ մանգաղ  
քաղած չէր զիս ալ ու չեմ իջած դեռ դադաղ. . .  
— Ո՛չ! Հպարտ եմ ատոր համար ու բարեբախտ,  
իմ մասին՝ միշտ պահել կուզեմ՝ ձեր յոյսն անխախտ։  
թէ թողուի միշտ ժանգոտիլ,  
պատեանին մէջ սուրըս փատիլ,  
Զը պիտի՞ ըլլայի ընկերը դահիճին։  
Պէտք չը կայ ուրեմն, ինձ տալ փառք մը առանձին։

Ու հակառակ, ինձ վոխարէն,  
շնորհաւորենք սրտի խորէն,  
զինակիցներս իմ թանկագին,  
որ եկան հաեւէս անվախո ու անընդհատ,  
ու մանաւանդ հերոս ձէլլատ:

## — ձէլլատ —

Իշխան, լաւ է համեստ ըլլալ,  
աւելորդ է չափագանցն ալ.  
Սուրբ Աստրանին ես եմ վիան,  
ամենը քեզ ենք պարտական:  
Այս. ու մենք ի՞նչպէս չըլլալնք ունկնդիր  
քու արի չեշտերուն ու ձայնին վրէժխնդիր:  
Ո՞վ պիտի չը պագնէր գրօշակիդ քղանցը.  
ո՞վ կրնար մերժել քեզ իր կեանքըն ու գանձը:  
Կորովդ էր ոիւցազնի ու գիտեմ կը շարժէր  
շատ վատերու խիստ նախանձը.  
բայց մեռածին չունչ կտրծարծէր:

## — իշխանը —

Երկրի մէկ սիրովն ամէնքըս ենք վառ,  
մեր սիրտն ու հոգին լոկ անոր համար:  
Մենք իւրաքանչիւրս բերինք մեր բաժին,  
յաղթական Զէյթունին.  
Թո՞ղ պահէ՝ ամբոխն այստեղ հաւաքուած,  
այսօրուան անմոռաց,  
յիշատակն եղական.  
սեւ օրին կուգայ, փայլուն ապագան:

## — թօլու վարդապետ —

Մեր հոգիներն արդ կը խայտան  
ի տես զէնքիս այս պսպղուն,  
ու ալեւորիս ինծի կուտան  
Նոր ոյժ զայն օրհնելու հաճոյքով մը ղեղուն:  
(Սարկաւագին մէկը բուրվառ մը կուտայ:)  
Բաւական կըզգայի խունկերուն ալ հոտը.  
շատ կարօտցայ ես սրտավառ:  
չը մեռած տեսնելու զէնքի տակ իմ հօտը,  
ու խունկի տեղ վառոգ կը ծխար իմ բուրվառ:  
Գովեալ ես, Տէր Աստուած, որ չառած իմ հոգին,  
շնորհեցիր ինձ լսել պայթիւնը բորակին:  
Այլ եւս՝ ինչպէս Սիմէօն ծեր՝  
կրամանիդ եմ պատրաստ կեցեր.  
շունչըս հընազանդ է բու կամքին....

## (Զէնքերուն ուղղելով)

Զէնքեր, որ ծռեցաք առջեւը խաչերուն,  
դրօշմ առիք արեան մէջ Քրիստոնեայ քաղերուն,  
կօրհնեմ զձեզ: Աւ դոք նորոգ,  
պիտ՝ դառնաք աւելի անդութ ու անողոք,  
թշնամին վանտել յաւիտեան այս տեղէն,  
մեր սրբալան երկրի հողէն:

Վերջապէս մեզ եղաւ Ամրոցը թրբական,  
այժմէն այլ հւըս բերդ մըն է ան հայկական.  
անոր հետ կանհետի թշնամուն արհաւիր,  
թող ըլլայ յաղթութեան մեզի նոր Արմաւիր:

— Ամբերգը —

Օվաննայ. թո՛ւ մեր շարական  
արձագանք տայ այս կամարէն,  
այսօր մեղ օր մ'է տօնական:  
թող մեր ձայներն այս Տաճարէն՝  
երկինքն ի վեր դէպ եթերին՝  
ամենազօր Աստուած թռին:

— Թօբալ վարդապետ —

Զի մոռնանք մենք կարդալ հոս հոգեհանդիստ,  
այս երկու քաջին, որ պառկած են հանդիստ,  
իմ զաւակներս գուշ երկնառաք,  
երանիկ, Ավէտիք, եղաք պատարագ  
Հայրենիքին... մեղ խոր կոկիծ  
կուտաք գուք, ո՛վ հոգիք անբիծ,  
առաքինի ու անձնուէր.  
զոհեցիք ձեր կեանքին ալ վեր,  
դուք Ազգին սուրբ մարտիրոսներ...  
զի մատաղ հասակնուդ լերիք ողջակէզ՝  
ոսկի երազն ու ձեր սրտեր սիրակէզ...:

— Ամբերգը —

Երանիկ, Ավէտիք, լուսափայլ պսակ  
սրբելը ձեր ճակտին դրին.  
մեծութիւնը և ձեր դերին  
պիտի պատմենք զաւկէ զաւակ:

— Թօբալ վարդապետ — (Մօտենալով Ավէտիքի  
գագաղին)  
«Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց,

Ճեպել ի յերկինս: Ու հոգիս փառքովդ  
թող առնու լոյսի ճաճանչ ուղղեցոյց:  
Եւ տար զիս, ով Տէ՛ր, հրեղէն կառքովդ  
վերին դասերն, որ սրբոցդ են յատուկ:  
Ցոյց տուր ծառայիդ ղեկն արդարութեան,  
որ անյայտ է մեր մոքին ու դազտուկ:  
և շուտ բաշխէ ինձ արքար դատաստան:

(Երգեցիկ գուսանները կը ծնրա-  
զրեն Երանիկի գագաղին չուրչ  
և կերպեն հետեւեալ մեղեղին:)

— Գուսանները —

Իմ բազգը՝ բանի որ՝

չուզեց տալ հարսնեկան

երաղիս իր վերջն, վայելք մարմնաւոր.  
բանի որ աւաշ, թարմս իմ կուսական  
պահուեցաւ մնաց անբիծ ու զգաստ,  
ինչպէս պտուղ մ'որ դեռ չունի մի խայծ. -  
արդ՝ ԱՄիածինդ հօր, մոյծ զիս յառագաստ  
մաքուր հարսաննեաց: »

(Գուսանները ոտքի կելնեն:)

— Ամբերգը —

Երանիկ, Ավէտիք, լուսափայլ պսակ

սրբերը ձեր ճակտին դրին.

մեծութիւնը և ձեր դերին,

պիտի պատմենք զաւկէ զաւակ:

(Եերս կը մտնէ Կատար Թիւրք-  
յէն կնկայ լաթերով, սպի-  
տակ զրօնակ մը ձեռքին: )

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵՒՆՈՅՆՆԵՐԸ, ԿԱ.ՏԱՐ

— ԽԺԵԲՔԸ —

Կատար:

— Կատար —

Զելան իմ ջանքերն ի զուր, ի դերեւ,  
հանեցի զայն ես շուտով մ'ի կատար:  
Պիտ' կառավարեն մեղ այսուհետեւ  
Թրիստոնեայ մարդ մը ու հայ ոստիկան.  
Խաչապաշտ աղդեր կարդաղը կուգան:

— ԽԺԵԲՔԸ —

Քրիստոնեայ մը մեղ կուգայ դայ մագա՞մ . . . :

— Կատար —

Այս', գործերնիս հիացում կուտան.  
արձագանքն անոնց կանցնին դաշտն ու ծով,  
բոլոր Քրիստոնեայ Աշխարհն յուղելով:  
Կը յաջորդէ նոր մ'այս ձեր յաղթութեան,  
ճզմելով Թուրքը թուցաւ մեր շղթան:  
Կարդացէք բերած իմ այս հեռագիր,  
այդ է Պետութեանց տուած վեր չն ադիր:  
(Թօբալ վարդապետին կերկարէ  
զիր մը, զոր կը կարդայ ցած  
ձայնով: Պահ մը լուսթիւն: )

— Թօբալ վարդապետ — (Կարդալ՛ն վերջ ուլախութմբ.)

Սիրելի որդիք, եղէք ունկնդիր:

(Բարձրաձայն կը կարդայ)

«Եւրոպական հինգ Պետութիւնը կուղեն՝  
Թուրքին խնդիրքով՝ կարգադրել ձեր Դատ.  
բաւ են ջարդերն որ հեռուն կը գուժեն,  
ու ձեզ պիտի տան զիրք մասամբ մ'աղատ: »

— Կատար —

Խարեցի<sup>6</sup> արդեօք ձեր յուսադրութիւն:

— ԽԺԵԲՔԸ —

Ո՛չ, ո՛չ ու երբէք. փորձն է հաստատուն.  
Հանուրի փառքէն ե՛կ բաժինըդ առ:

— Կատար —

Կեցցէ՛ Զէյթուն:

— ԽԺԵԲՔԸ —

Կեցցէ Կատար:

— Կատար —

Ինչու . . . ըրածըս բան մ'է գերնտիր.  
ազգը սիրել պարաք մ'է նուիրական.  
որ պարաք մ'է է՞ր մեր մէջ գնել խոիր:  
Ո՛չ, ո՛չ . . . Զըոյցներ ըլ կա՞ն թէ ի՞նչքան  
կիներ աւել բան զիս ըրած ունին,  
ազգին համար և կամ թէ կըրօնին:  
Մի՛ ընէք բնաւ ինձ համար ներբող.

պահեցէք ձեր սէրն ու աղապատանք  
եղական երկու քաջին հոս պառկող,  
որ միացան երբ հազցուցին պատանք:  
(Ցոյց կուտայ երկու դագաղները:)

Թո'լ մեր սգերդն անոնց համար,  
ի՞նչ սարսըռիչ սեւ բաղդ մըն է,  
որ կը մտնեն այսպէս խաւար,  
Զէյթունն անկէ երբ դուրս կելնէ:  
(Խանդափառուած)

Կ'ոսկեզօծի երկնակամար,  
չէինք տեսած բնաւ այսքան.  
կը զօծի ան մեզի համար  
փայլով Բարին որ ոգութեան:

## — Խմբերգը —

Կ'ոսկեզօծի երկնակամար,  
չէինք տեսած բնաւ այսքան.  
կը զօծի ան մեզի համար  
փայլով Բարին որ ոգութեան:

Զէյթունցիներ ծագեց արեւ  
Պէրղընկայի սարին վերեւ,  
մեր սրտերու հայրենասէր  
արթննալու ժամն է հասեր:  
եթէ կախն ունի հրապոյը,  
յաճախ մեզ է անագորոյն.  
հանգիստ մեանք, պահենք մեր թուր,  
խաղաղութեան ալ տանք ողջոյն:

— Նազար իշխան, ձէլլատ, թօբալ վարդապետ և կատար —

Միասին

Այ հանգիստ մեանք ու պահենք մեր թուր,  
զայնք աշենք թուրքն երբ գայ վառել մեր դուռ:  
Անիկայ ըլլայ միշտ մեզի թիկունք,  
իրաշունքն ոյժ չէ, ոյժն է իրաշունք:  
Էզինիս տնկենք, տուներնիս չինենք,  
որբեր, նոր հարսեր չուտ չուտ մենք հինենք. (1)  
մեր Ազգը ծլի ու նորէն ծաղկի,  
մեծնան մեր գիւղեր նման քաղաքի:  
Փրկութիւն չկայ առանց կռուողի,  
կռիւն ալ չըլլար առանց ամբոխի:  
Չը տարտղնենք մենք այս քարէն մեր բոյն.  
պատ քաշենք օտար աշխարհի ճամբուն:  
Բաւ են մեզ սնուռնդ չամիչն, համէճ-ջուր,  
երջանիկ ենք թէ մեզ չըսեն կեազուր:  
թէ թուրք գիւղացին օր մը արթնցաւ,  
անոր հետ մէկտեղ կը սփոփինք մեր ցաւ.  
Հայ ու թուրք եղբօր մը պէս մենք կապըինք,  
երկրին մէծութեան մէկտեղ կաշխատինք:  
Բայց թէ մնաց ան կոյր ու մոլեռանդ,  
չի կընար զսպել բնաւ մեր եռանդ.

(1) Կիւիկիոյ մէջ կարգուող երիտասարդին ու հար-  
սին ձեռքերը կինայով կը կարմրեն:

գեռ մեղ չի տարած դէպի գերեզման .  
առաջ կը թաղենք մեղ չափ մ իւ ս իւ լ մ ա ն :  
Հարկի տեղ թող գան այն ատեն առնել ,  
Հայ ու Թուրք ոսկոր իրար հետ խառնել :  
♦ ♦ ♦ ♦ ♦ ♦ ♦ ♦ ♦ ♦ ♦ ♦ ♦  
- Ապրինք՝ ազատ կեանք . - մեռնինք՝ ազատ բուն ,  
Խաչ մը մեր վրայ կըլլայ միշտ կանգուն . . . :



Կ Ա Ր Ե Ւ Ո Ր Վ Ր Ի Պ Ա Կ

Ել	Տող	
41.	25	Առաջին բառը պիտի ըլլայ Պէրզընկայի :
76.	12	Դեռ չէ <sup>o</sup> յաղթուած , չէ անձնատուր : Պիտի ըլլայ՝
76.	13	Դեռ չէ <sup>o</sup> յաղթուած , դեռ չէ <sup>o</sup> անձնատուր : ինչպէս նաեւ ինձ լուր մը տուր , Պիտի ըլլայ՝ ինչպէս նաեւ ինձ շուտով լուր մը տուր :

TR 1



891.99

62-44